ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **«Ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառությունները տարրական դասարաններում պատմողական բնույթի ստեղծագործություններ ուսուցանելիս »**

Ուսուցիչ/ դասվար/՝ _____ Մկրտչյան Սիլվա Շիրազի

Ստորագրություն անուն, ազգանուն, հայրանուն

Ղեկավար՝ _____ Սարգսյան Շողիկ/մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ/

Ստորագրություն անուն, ազգանուն,

Գյումրի 2023

Թեմայի անվանումը՝

«Ավանդական և ժամանակակից մեթոդների զուգադրական կիրառությունները տարրական դասարաններում՝ պատմողական բնույթի ստեղծագործություններ ուսուցանելիս»

Համառոտագիր

Գիտահետազոտական նոր նվաճումները, գիտության զարգացման միտումները, հասարակական պահանջների փոփոխումը հիմք են հանդիսանում կրթության և դաս-տիարակության իրականացման ուղիների վերանայմանը: Տարրական դասարաններում ուսուցումը իրականացվում է տարաբնույթ մեթոդների օգնությամբ:Մեթոդի ճիշտ ընտրության մեջ է կայանում նաև ուսուցչի (դաստիարակի) վարպետության հարցը: Ժամանակակից մանկավարժության մեջ հավասարապես կարևոր է և՛ ժամանակակից, և՛ ավանդական մեթոդներով ուսուցման կազմակերպումը: Կարևորվում է նաև այս մեթոդների համադրությամբ ուսուցման կազմակերպման կարողությունը: Ավանդական և ժամանակակից մեթոդների զուգադրումը էապես նպաստում է կրթության արդյունավետությանը: Տարրական դասարաններում տարաբնույթ մեթոդ-ների կիրառությունը զարգացնում է աշակերտի գիտելիքները, կարողությունները, հմտությունները: Աշակերտի մեջ ձևավորում է բազմաբնույթ մտածողությունը, դյուրին վերլուծություն կատարելու ունակությունը: Այս տեսանկյունից էլ հիմնավորվում է թեմայի արդիականությունը:

Թեմայի նպատակին հասնելու համար առաջադրվել են խնդիրներ և ուսումնասրիվել: Աշխատանքի վերլուծության արդյունքում կատարվել է եզրակացություններ:

Մասնագիտական գրականության ցանկն ընդգրկել է 8 կտոր գրականություն, այդ թվում՝ բուհական ձեռնարկներ, էլեկտրոնային կայքէջեր և մայրենի լեզվի դասագրքեր: Աշխատանքը կազմում է համակարգչային շարվածքի 46 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____5
ԳԼՈՒԽ 1 . ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1.1 ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ_____7
1.2 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ_____17
ԳԼՈՒԽ 2. ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
2.1 ՄԵԹՈԴՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻՍ_____25
2.2 ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ_____40
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_____46
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ_____47

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրահայտ է, որ տարրական դասարաններում ուսուցումն իրականացվում է մի շարք մեթոդների օգնությամբ: Այստեղ շատ կարևոր է նշել այն հանգամանքը, որ մեթոդների բազմազանության մեջ պակաս կարևոր չէ ուսուցչի ճիշտ ընտրություն կատարելու կարողությունը: Այսինքն՝ կարևոր է ոչ միայն մատուցվող նյութը, այլ նաև գործադրած մեթոդը: Առանձին մեթոդը կարող է արդյունավետ լինել մեկ թեմայի ուսուցման ժամանակ, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ: Փաստորեն մեթոդի ճիշտ ընտրությունն է, որ հաճախ օգնելու է և՛ արհեստավարժ, և՛ անփորձ ուսուցչին:

Թեմայի արդիականությունը: Գիտատեխնիկական նոր նվաճումները, գիտության զարգացման միտումները, հասարակական պահանջների փոփոխումը հիմք են հանդիսանում կրթության և դաստրահակության իրականացման ուղիների վերանայմանը: Ժամանակակից մանկավարժության մեջ հավասարապես կարևոր է և' ժամանակակից, և' ավանդական մեթոդներով ուսուցումը, իսկ վերջիններիս զուգադրումը կարող են նպաստել ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Մեթոդների ընտրությունը և դրանց ճիշտ զուգադրումը, կարծում ենք, մանավանդ տարրական դասարաններում առավել քան կարևոր է, քանի որ հենց այս ժամանակահատվածում է, որ դրվում է ուսուցման հիմքը: Ավանդական մեթոդները վաղուց արդեն անցել են փորձաշրջան՝ ապահովելով մանկավարժության մեջ իրենց կայուն տեղը, իսկ ինչ վերաբերում է ժամանակակից մեթոդներին, ապա այս պարագայում չափազանց կարևոր է դրանց գործադրումը և արդյունավետության ճիշտ գնահատումը: Ընդ որում, այսօր մեր մանկավարժների առջև դրված նոր մարտահրավեր՝ առցանց դասավանդումը, որը պակաս կարևոր չէ . ինչ մեթոդ պետք է կիրառի ուսուցիչը մանավանդ տարրական դասարանում, որպեսզի այն հնարավորինս արդյունավետ լինի: Այս տեսանկյունից էլ հիմնավորվում է թեմայի **արդիականությունը:**

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, վերլուծել և հիմնավորել ավանդական և ժամանակակից մեթոդների զուգադրական կիրառությունները տարրական դասարաններում պատմողական բնույթի ստեղծագործություններ

ուսուցանելիս։ Այդ նպատակին հասնելու համար առաջդրվել են հետևյալ խնդիրները

1. Ուսումնասիրել և վերլուծել ավանդական և ժամանակակից մեթոդների բովանդակությունը, էությունն ու առանձնահատկությունները։
2. Ուսումնասիրել մեթոդների զուգադրական կիրառությունները տարրական դասարաններում՝ պատմողական բնույթի ստեղծագործություններ ուսուցանելիս։
3. Հիմնավորել ավանդական և ժամանակակից մեթոդների զուգադրական կիրառության արդյունավետությունը տարրական դասարաններում առցանց ուսուցման ժամանակ։
4. Առանձնացնել, վերլուծել ու զուգադրել ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառումն առցանց դասավանդման ժամանակ։

Աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից և Օգտագործված գրականության ցանկից։

Աշխատանքը կազմում է համակարգչային շարվածքի 46 էջ։

ԳԼՈՒԽ 1 . ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Լեզվի մեթոդիկայի հարցերն ընդհանրապես և տարրական դասարաններում կիրառվող ուսուցման մեթոդների բովանդակության և էության հարցերը մասնավորապես, եղել և մնում են մեթոդիկա առարկայի գլխավոր հարցերի շարքում: Հայ մանկավարժական մտքի, ինչպես նաև համաշխարհային մանկավարժության հսկաները տարբեր առիթներով բազմիցս շոշափել են ուսուցման մեթոդների ընտրության, դրանց ճիշտ կիրառության խնդիրները: Նախ նշենք, որ *մեթոդ* բառը գալիս է հունարեն *μεθοδος* բառից, որ նախապես նշանակել է դեպի որևէ նպատակ տանող ուղի, իսկ հետագայում իմաստափոխվելով՝ գործածվել է իբրև բնության և հասարակական երևույթների հետազոտման, ինչպես նաև գիտելիքների ուսուցման եղանակ: Այժմ էլ մեթոդ են համարվում թե՛ հետազոտության եղանակը, որով կատարվում են հայտնագործումներ, և թե՛ ուսուցման եղանակը, որով արդեն ձևակերպված գիտելիքները ուսուցանվում են դպրոցում: Վերջինիս հիման վրա էլ ձևավորվել է *մեթոդիկան*[1]: Ըստ այսմ՝ **«Ուսուցումը ուսուցչի դասատվության և աշակերտի ուսումնառության միասնությունն է, իսկ մեթոդները նրանց փոխկապակցված գործունեության եղանակներն են»**[2]:

Նշենք, որ տարրական դասարաններում կիրառվող ուսուցման մեթոդների բովանդակության և էության հարցերը շոշափելիս հարկ է քննադատական մոտեցում ցուցաբերել դրանց ընտրության հարցում: Օրինակ, թե ո՞րն է այս կամ այն մեթոդի առավելությունը, ո՞ր թեմայի ուսուցման ժամանակ ո՞ր մեթոդը կիրառել և այլն: Մեթոդների այս բազմազանության մեջ ճիշտ կողմնորոշվելու համար ընդունված է դրանք խմբավորել հետևյալ կերպ՝ *ավանդական* և *ժամանակակից* մեթոդներ[3]:

---

[1] Դասախոսություններ Լեզվի մեթոդիկա առարկայից, ՇՊՀ, Հումանիտար գիտությունների և արվեստի ամբիոն, դասախոսություն 3, էջ 9:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] <<Լեզվի մեթոդիկան որպես մանկավարժական գիտությունը>> առարկայի դասախոսությունների փաթեթ, էջ 56, ՇՊՀ, 2020 թ.:

Այժմ անդրադառնանք տարրական դասարաններում ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառության առանձնահատկությունների քննարկմանը:

Սկսենք ավանդական մեթոդներից, որոնք, արդեն անցնելով ժամանակի քննությունը, մանկավարժության մեջ ունեն իրենց կառն տեղը: Ինչպես ընդունված է ասել՝ «Լավագույն նորը մոռացված հինն է»: Ավանդական մեթոդների կիրառությունը տեսական ու գործնական լայն նշանակություն ունի թե՛ տարրական դասարանի աշակերտի, թե՛ ուսուցչի համար: Ավանդական մեթոդների շարքում մինչ օրս էլ կարող են իրենց հաստատուն տեղը ունենալ օրինակ հետևյալ մեթոդները՝

1 Բացատրական ընթերցանություն

2 Ուսուցչի խոսք

3 Զրույց

4 Ցուցադրում

5 Դիտում

6 Աշխատանք դասագրքերով

7 Վարժություններ[1]:

«Բացատրական ընթերցանության մեթոդը» հայ իրականության մեջ սկսել է կիրառվել դեռևս 18-րդ դարից: Անվանի հայ մանկավարժ Խաչատուր Աբովյանը մեծ կարևորություն էր տալիս բացատրական ընթերցանության մեթոդին: Առաջինը նա է անդրադարձել ու տեսականորեն հիմնավորել մայրենի լեզվի ուսուցման այս ծրագրային մեթոդը: Լինելով ժամանակի առաջադեմ մանկավարժական մտքի կրողը՝ նա ուզում էր ժամանակի եվրոպական մանկավարժության լավագույն փորձը բերել հայ իրականություն: Հետագայում նրա գործը շարունակեցին ու զարգացրին Ղ.Աղայանը, Հ.Ղուկասյանը, Բահաթրյանցը, Մանդինյանը, Պալասանյանը, Նազարյանը, Հովհաննիսյանը և ուրիշներ[2]: Ըստ էության՝ սա հետագայում ձևավորված «Ուսուցչի խոսք» մեթոդի նախատիպն էր: Այս մեթոդի ածանցյալ տարբերակներն են նաև հետևյալ մեթոդները՝ «Զրույց՝ նախապատրաստական,

---

[1] [1] << Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա>> առրկայի փաթեթ, էջ 4, ՇՊՀ, 2015 թ.:

[2] Տես՝ նույն տեղում

ուղեկցող, ամփոփիչ», «Բնագրի ընթերցում», «Բառային աշխատանք», «Բովանդակության վերապատմում», «Ամփոփում»[1]:

Բացատրական ընթերցանությունը լայն առումով՝ ուսուցչի խոսքն է: Ուսուցչի ճիշտ ընթերցումից շատ բան է կախված: Բացատրական ընթերցումը ուղեկցվում է ոչ միայն նյութի առանձին մասերի մեկնաբանությամբ, այլև որոշ դեպքերում կարող է նաև տեղի ունենալ նյութից շեղում, ասենք առօրյա կենցաղից, համանման երևույթների մեջբերում, օրինակ: Սա ևս կարևոր է նոր նյութի ընկալման գործում: Այստեղ կարելի է հիշել Ուշինսկու հետևյալ դիտարկումը. «Քանի դեռ աշակերտները չեն կարողանում կարդացածն ինքնուրույն ընկալել՝ զրույցը պիտի նախորդի կարդալուն, որպեսզի հող ստեղծի լսածը հասկանալու, ինչպես նաև հետագայում այն գիտակցորեն և արտահայտիչ կերպով կարդալու համար, իսկ երբ աշակերտն արդեն ի վիճակի կլինի կարդացածն առանց հատուկ նախապատրաստության հասկանալու, զրույցը կարող է հաջորդել կարդալուն»[2]:

Բացատրական ընթերցանության վերաբերյալ, ընդհանուր առմամբ, ուշագրավ դիտարկումներ է կատարում Ջուլիետա Գյուլամիրյանը: Մասնավորապես նա կանգ է առնում այն հանգամանքի վրա, որ տարրական դասարաններում էլ պիտի որոշակի բաժանում տեղի ունենա՝ պատմողական բնույթի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ: Հեղինակը գտնում է, որ «ավելի շահեկան է չորրորդ դասարանում իրականացնել ավելի ծավալուն նյութերի հասկանալով ընթերցում և դրանց շուրջ գրականագիտական աշխատանք, քան երրորդ դասարանի նման շարունակել միևնույն նյութի բազմակի ընթերցումը անգամ կարդալու բոլոր տեսակների կիրառմամբ»[3]:

Օրինակ՝ մայրենի 4-րդ դասարանի դասագրքում զետեղված է <<Երկու եղբայր>> կորեական հեքիաթը:Նաքիքան բուն դասին անցնելը ուսուցիչը կարող է աշակերտներին միր քանի հարցեր տալ՝

1. Երբևէ օգնության կարիք զգացել եք

---

[1] Ա.Տեր Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, տարրական դասարաններ, Երևան, 1980թ, «Լույս» հրատարակչություն, էջ 165:

[2] Ա.Տեր Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, տարրական դասարաններ, Երևան, 1980թ, «Լույս» հրատարակչություն, էջ 146:

[3] «Մանկավարժական միտք» հանդես, Երևան, 2013թ, էջ 147-148, Կարդացած բնագրի շուրջ տարվող աշխատանքը չորրորդ դասարանում

2. Ինչպես եք օգնել կարիքավորներին
3. Ինչ զգացողություններ ունեցաք :

Քննարկաւումներից հետո ուսուցիչը բացատրելով հստակեցնում է հիմնական միտքը և ընթերցում դասը:Ընթերցման ժամանակ շատ կարևոր է ձայնի տոնայնությունը, առոգանությունը: Միասին վերլուծում են դասը , բնութագրում հերոսներին :

Ընդունելով հեղինակի դիտարկումները՝ գտնում ենք, որ ուսուցիչը զգուշությամբ և մանրախնդրորեն պետք է ընտրի այն նյութը, որը նախատեսում է ներկայացնել տարրական դասարանի երեխաներին: Մանավանդ, որ կարծում ենք, որ նույնիսկ չորրորդ դասարանցուն տեղին չէ ծանրաբեռնել գրականագիտական վերլուծության և նյութի լեզվաոճական հարցերով: Դա կարող է լրացուցիչ ծանրաբեռնվածություն լինել տարրական դասարանում սովորողի համար: Հեղինակի մյուս դիտարկումները շատ կարևոր են տարրական դասարանի սովորողների ուսուցման և դաստիարակության համար: Բերենք ուսուցման սխեման, որ նշում է հեղինակը:

«Ընթերցված գեղագիտական ստեղծագործության վերլուծության ուղղություններն ու բովանդակությունը չորրորդ դասարանում

1. Ծանոթացում գրողի կենսագրության մի քանի էական ու արժեքավոր պահերին:
2. Աշխատանք ընթերցված ստեղծագործության սյուժեի շուրջ:
3. Գրական հերոսի դիմագծի ընկալում և խորացում:
4. Գեղարվեստական ստեղծագործության լեզվի և ոճի դիտարկում:
5. Գաղափարական բովանդակության բացահայտում:
6. Ստեղծագործության կերպարային- զգացմունքային ընկալման խորացման ճանապարհով արտահայտիչ ընթերցանության նախապատրաստում[1]:

Անշուշտ, տարրական դասարանի սովորողի մեջ ինքնուրույն մտածողության զարգանում է պատմողական ժանրի ստեղծագործությունների ուսուցման միջոցով /հեքիաթներ, պատմվածքներ, առակներ/:

Կազմենք դասի պլան՝

[1] Տես՝ նույն տեղում

Դասարան՝ 4-րդ

Ուսուցչուհի՝ Պետրոսյան

Դասի տիպը՝ խառը

Օգտագործվող մեթոդներ՝ <<Վենի դիագրամ>>, <<գլուխ գլխի տվեք>>, <<պոպ կոռն>>

Թեման՝ <<Առյուծն ու մուկը>>, առակ

Նպատակը՝ գիտելիքների հաղորդում, ընկերասիրության և միմյանց կարեկցելու պատրաստակամության զարգացում

Ընթացքը՝ <<Վենի դիագրամ>> մեթոդի օգնությամբ ամփոփում ենք նախերդ դասը: Ուսուցչուհին հեղինակի՝ Եզոպոսի մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում աշակերտներին:Բացատրում է առակի բովանդակությունը: <<Գլուխ գլխի տվեք>> մեթոդի օգնությամբ աշակերտները կատարում են աշխատանք՝ մտացում են հետևյալ հարցի մասին՝ Իսկ դուք ինչպես կվարվեիք:

Ուսուչուհու օգնությամբ աշակերտները բնութագրում են հերոսներին :

Ամփոփումը կատարում են << պոպ կոռն>> մեթոդի օգնությամբ , առանձնացնում են գլխավոր միտքը:

Այժմ խոսենք մյուս մեթոդների մասին: Ամփոփման ձևով նշենք, որ «բացատրական ընթերցանության մեթոդը դիդակտիկական ձևերի ու միջոցների ամբողջական համակարգ է, վերը հիշված մեթոդներն էլ նրա հիմնական բաղադրամասերն են, առանց որոնց, ոչ մի նյութի մշակում կատարյալ լինել չի կարող»:[1]

Բնագրերի ընթերցանությունը մեծ նշանակություն ունի սովորողի զարգացման, մենք կավելացնեինք նաև, աշխարհայացքի ձևավորման համար: Այս մեթոդը միատարր չէ, և իր ներսում ունի առանձին ձևեր: Այս դեպքում արդեն կարող ենք օգտագործել ձև հասկացությունը, միայն թե շատ նեղ նշանակությամբ, ասել է մեթոդ ընդհանուր հասկացության շրջանակներում, և կոնկրետ մեկ մեթոդի շրջանակներում: Այդ ձևերն են՝

[1] Ա.Տեր Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, տարրական դասարաններ, Երևան, 1980թ. «Լույս» հրատարակչություն, էջ 146

1. Ընթերցանություն ձայնով կամ բարձրաձայն,
2. Անհատաբար, որը ենթադրում է և՛ ձայնով կարդալը, և՛ լռությամբ կարդալը՝ նայած իրադրության,
3. Խմբովին և դերերով
4. Սովորական
5. Ընտրովի և բացատրելով կամ մեկնաբանելով, որոնցից ամեն մեկն ունի գործադրման իր որոշակի ոլորտներն ու ձևերը։

Սրանցից յուրաքանչյուրի ընտրությունը կախված է մեծ մասամբ ուսուցչի նպատակադրումից և ուսուցանվող նյութից։ Տարրական դասարաններում ընթերցանությունը մեծ մասամբ իրականացվում է ձայնով, քանի որ երեխաները ավելի շուտ են սովորում իրենց ձայնը լսելիս, և միաժամանակ զարգանում են երեխայի կարդալու տեխնիկան, հմտությունները, զարգանում է նրանց խոսողության օրգանների, ձայնի և շնչառության ճիշտ կառավարելու արվեստը։

2 Լռությունն ևս արվեստ է։ Եվ հետևաբար լուռ կարդալու ընդունակությունը ևս կարեվոր է աշակերտների համար։ Չենք ժխտում, որ լուռ կարդալը տարրական դասարանի աշակերտների մոտ կարող է նաև չտալ համահավասար արդյունք, սակայն ամբողջութ յան մեջ վերցրած՝ այս ձևը ևս պակաս կարևոր չէ։ Լուռ կարդալը իր որակով ու դրսևոր ման ձևով, ըստ էության, մտովի կարդալ է, որովհետև իրականացվում է միայն աչքերի շարժումով, առանց խոսողության օրգանների մասնակցության։ Լուռ կարդալու առավելությունը այն է, որ այս դեպքում աշակերտը էներգիա քիչ է ծախսում, հետևաբար ուշ է հոգնում և միաժամանակ հարմար է ժամանակի խնայողության տեսակետից։ Այս ձևը ևս նախընտրելի է կիրառել տարրական դասարաններում։ Սակայն տարրական դասա րանի աշակերտը առաջինը յուրացնում է ձայնով կարդալու ձևը, ապա նոր լռությամբ կարդալը։ Չի կարելի երեխայից պահանջել անպայման կարդալ լռությամբ, քանի որ նրանք մեծ մասամբ միշտ էլ դժվարանում են այս հարցում։ Տարրական դասարանի սովորողներին պիտի աստիճանաբար սովորեցնել լռությամբ կարդալուն։ Ուսուցիչը պիտի հատկապես ուշադիր լինի այս դեպքում, քանի որ երեխաները մեծ մասամբ լուռ են կարդում դպրոցում, դասի ընթացքում։ Լուռ կարդալուց հետո անպայման պիտի երե խային տալ լրացուցիչ աշխատանք, ինչպես օրինակ լռությամբ գտնել

բնագրի պահանջ վող հատվածը և այլն։ Սակայն տանը պիտի երեխան կարդա բարձրաձայն, որպեսզի հավասարապես զարգանան նրա լուռ կարդալու ունակությունն ու ձայնով կարդալու հմտությունը միաժամանակ։

3 Խմբովին կարդալը տարրական դասարաններում ամենից հաճախ կիրառվող ձևերից մեկն է։ Այն օգնում է բարձարցնելու աշակերտի ակտիվությունը դասի ընթացքում, զարգացնելու կարդալու տեխնիկան։ Այս ձևը գործածելի է հիմնականում 1-ին, 2-րդ դասարաններում։ Հաճախ երեխաները խմբովին կարդում են ուսուցչի ընթերցումից հե տո, որը չի խրախուսվում։ Երբ կարդում է նախ ուսուցիչը, ապա աշակերտները տրամաբանորեն սպասում են նյութի մեկնաբանության ուսուցչի կողմից, նրա խոսքին, եթե այն չկա, ապա դրանից հետո նրանց կարդալ հանձնարարելը արդյունավետ չէ։ Ուրեմն խմբային ընթերցումը պիտի կատարվի առաջին հերթին երեխաների կողմից։ Հետո լրացվի ուսուցչի օգնությամբ։ Տարրական դասարաններում խմբովին կարդալը իրականացվում է երկու ձևով՝ ուսուցչի կարդացածը կրկնելով և ուսուցչի տված չափով կամ ռիթմով կարդալով։ Առաջին ձևը թեև հեշտ և մատչելի է իրականացման տեսակետից, սակայն քիչ օգտակար է, որովհետև մեխանիկական աշխատանք է, ուստի նյութի յուրացման տեսակետից ոչ հանձնարարելի։

4 Դերերով կարդալը ևս օգտակար ձևերից մեկն է։ Այն մի տեսակ նման է դերային խաղ կոչված մեթոդին։ Հատկապես կիրառելի է պատմողական բնույթի ստեղծագործություն ների ուսուցման ժամանակ, որտեղ համեմատաբար շատ են գործող հերոսները (հեքիաթ, առակ,պատմվածք և այլն)։ Այս դեպքում մարզվում է երեխայի ուշադրությունը, հեշտ է յուրացվում նյութը, և ապա ուշ է մոռացվում։ Պետք է հատկապես ընտրել պատմողական բնույթի այնպիսի երկեր,որտեղ համեմատաբար շատ են հերոսները և հնարավոր է ընդգրկել հնարավորինս շատ աշակերտների։

5 Ընտրովի ընթերցումը ևս կարևոր ձև է տարրական դասարաններում ընթերցանության համար։ Հատկապես կարելի է կիրառել առակների ուսուցման ժամանակ, թեև բացառված չէ նաև նրա կիրառումը պատմողական բնույթի այլ ժանրերում։ Այս դեպքում բնագրից առանձնացվում են այս կամ այն գործող հերոսի խոսքերը, այս կամ այն հատվածը, միտքը և այլն, այն առաջին պլանի վրա դնելու

համար։ Այսպիսի ընթերցումը մեծապես նպաստում է լավ կարդալու հատկության զարգացմանը, ինչպես նաև լուռ ընթերցանության հմտության մշակմանը։ Երբ աշակերտը մտնում է դերի մեջ՝ ավելի ճիշտ ու խորն է հասկանում տրված նյութը։
Բացատրական կամ մեկնաբանական ընթերցանությունը ունի իր դրսևորման եղանակ ները՝ ըստ անհրաժեշտության, բնագրի տված հնարավորությունների և ուսուցչի նպատակադրման։ Բնագիրը բացատրելով կարելի է կարդալ տալ մի քանի ձևով՝ մտքերը կամ բովանդակությունը բացատրելով, բառային աշխատանք կատարելով՝ ան ծանոթ բառերը բացատրելով և այլն։ Առաջին դասարանում ուսուցիչը նյութը պիտի կարդա 2 անգամ։Առաջին անգամ նյութը կարդացվում է ամբողջությամբ, որպեսզի աշակերտները լռությամբ ընկալեն ու մարսեն։ Երկրորդ անգամ ավելի պարզ ու դանդաղ, որպեսզի աշակերտները կարողանան լսել և հետևել ուսուցչին։

Ուսուցչի խոսքը այսօր էլ շարունակում է մնալ արդիական, որպես ուսուցման մեթոդներից մեկը։ Այն կիրառելի է դասի բոլոր փուլերում՝ սկզբում, միջում և վերջում։ Այն ծառա յում է ընդհանրացման, ուղղություն տալու նպատակին։ Այն պիտի լինի պարզ, հակիրճ հասկանալի, գրագետ ու տրամաբանական, պիտի արտահայտի տվյալ թեմայի առանձնահատկությունը, հաճախ պիտի նաև բաց թողնել մանրամասները, որ աշակերտները սովորեն դասագրքերով և հանձնարավող վարժությունների վերլուծությունների շրջանակներում։ Ուսուցչի խոսքը չպիտի լինի միալար ու ձանձրալի, պիտի լինի նաև միջինից մի փոքր բարձր, որպեսզի աշակերտները չհոգնեն ու չկորցնեն զգոնությունը։

Զրույցը միայն հարցուպատասխան չէ։ Այն ըստ բնույթի և անցկացման ժամանակի՝ լինում է երեք տեսակ՝ 1նախապատրաստական, այսինքն բնագրի ընթերցմանը նախորդող կամ ընթերցումը նախապատրաստող, 2 ուղեկցող, այսինքն կարդալուն ուղեկցող կամ բնագրի վերլուծման հետ կապված, և 3 ամփոփիչ, կամ թեմայի ամփոփման հետ կապված։ Պետք է հիշել, որ զրույցը իր բնույթով երկկողմանի երևույթ է, և պիտի լսել նաև սովորողի խոսքն ու հարկ եղած դեպքում հենց զրույցի ընթացքում մեկնել աշակեր տին անհասկանալի իրողություններն ու հարցերը։ Պատմողական բնույթի երկերի դասահաղորդման ժամանակ մեծ մասամբ պետք է նախապատրաստական զրույց անց կացնել, որպեսզի աշակերտները

հոգեբանորեն նախապատրաստված լինեն հեղինակի արտահայտած հույզերն ու ապրումները ճիշտ ընկալելուն և վերարտադրելուն, ինչ պես նաև բնագիրը գիտակցորեն ու արտահայտիչ ձևով կարդալուն: Նախապատ-բաստական զրույցի ժամանակ ուսուցիչը ամբողջությամբ չի շարադրում նյութը, այլ միայն հող է ստողծում նյութի ճիշտ ընկալման համար: Նախապատրաստական զրույցի հիմնական նպատակն է՝ **ա)** երեխաներին նախապատրաստել ստեղծագործության բովանդակությունն ու կերպարները ճիշտ հասկանալուն, **բ)** նրանց տրամադրել ընթերցվելիք նյութին համապատասխան, **գ)** երեխաներին ծանոթացնել ստեղծա-գործության լեզվին:

Զրույցի մյուս ձևը կարդալուն զուգընթաց կամ նյութի վերլուծման ժամանակ անցկաց-վող ուղեկցող զրույցն է, որի նպատակն է ուղղություն տալ աշակերտի մտքին, նրան ներգրավել բնագրի վրա կատարվող աշատանքներին, հաղորդել նոր լրացուցիչ տեղեկություններ նյութի վերաբերյալ և այլն: Ուղեկցող զրույցը կարելի է կիրառել նաև պատմողական բնույթի երկերի դասավանդման ժամանակ, բայց գրեթե գլխավորապես այն դեպքերում, երբ աշակերտները արդեն ծանոթ են նյութին, յուրացրել են այն: Օրինակ՝ դասահարցման կամ ամփոփման ժամանակ: Ամփոփիչ զրույցի ժամանակ մի կողմից ամփոփվում և ի մի է բերվում այն ամենը, ինչ աշակերտները սովորել են տվյալ նյու թից, մյուս կողմից որոշ ընդհանրացումներ, հետևություններ, գործնական եզրա-կացություններ են արվում, որոնք կարևոր են սովորած գիտելիքները իրար կապելու և համակարգելու, և երեխաների մեջ դրանք ինքնուրույն կերպով գործադրելու կարողության և մշակման համար: Դրա համար էլ ամփոփիչ փուլում հատկապես ուշադրութ յուն է դարձվում յուրացված նյութի լեզվի, ընդհանուր բովանդակության հարցերին, որպեսզի երեխաները կարողանան ընդհանրացումներ կատարել նյութի վերաբերյալ: Եթե, օրինակ նյութի թեման մինչ այդ անցած դասերից կամ կենսափորձից ծանոթ է երե խաներին, ապա կարելի է կիրառել կատեխիզիսային կամ հարցուպատասխանի մեթոդը: Սա ենթադրում է ակտիվ երկկողմանի զրույց աշակերտների և ուսուցչի միջև, որի ընթացքում ամրապնդվում են սովորողի յուրացրած գիտելիքները: Իհարկե հարցերը այս դեպքում նախապես արդեն պատրաստված են ուսուցչի կողմից, որոնք նպա-տակ ունեն վեր հանելու և ամբողջացնելու աշակերտների գիտելիքները: Այս մեթոդը

նորություն չէ մեր մանակավարժության մեջ և գալիս է դեռևս միջնադարից։ Միջնադադարյան հայկական դպրոցներում (Գլաձորում, Անիում, Տաթևում և այլուր) 13- րդ դա-ից սկսած լայնորեն կիրառվել է մեր ուսուցիչների կողմից։ Զրույցի երրորդ ձևը դիդակ տիկ զրույցն է, որի ընթացքում, ըստ էության ուսուցիչը չի խոսում նոր նյութի մասին, այլ ցուցադրում է նույն թեմային վերաբերող նկար, պլակատ, դիաֆիլմ և այլն։

1.2 «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները կրթական ոլորտի կարևոր բաղկացուցիչ մասն են կազմում: Ուսուցման արդի խնդիրներից է կրթության որակի բարելավումը: Այսօր անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել ոչ միայն գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, այլ նաև այդ ամենը գործնականում կիրառելու կարողություն: Այդ նպատակով պետք է ուսուցումը դարձնել ավելի մատչելի: Մատչելիությունը հնարավորություն է տալիս ընտրել տարբեր մեթոդներ և ձևեր՝ ուսուցումը ճիշտ կազմակերպելու համար: Տարրական դասարաններում կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնց կիրառման արդյունքում սովորողները ոչ թե մեխանիկորեն յուրացնում են պատրաստի գիտելիքներ, այլ իրենք ակտիվորեն մասնակցում են գիտելիքների ձեռքբերմանը: Ժամանակակից մեթոդների կիրառումը համապատասխանեցվում է տարրական դասարանների աշակերտների տարիքային առանձնահատկություններին: Շատ կարևոր է հիշել նաև հետևյալ հանգամանքը: Ե՛վ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդներով ուսուցում կազմակերպելիս՝ պետք է նկատի ունենալ, որ դպրոցի պահանջը որակյալ կրթություն տալն է: Կրթությունը որակյալ կլինի այն դեպքում, երբ համաշխարհայնացման ներկա արագացող տեմպերում մենք կկարողանանք քայլել աշխարհի հետ համընթաց: Եվ աշխարհից չմեկուսանալու, բայց նաև նրան չձուլ վելու համար մենք պիտի ձևով ընդունենք համաշխարհայնացումը, իսկ բովանդակութ յամբ ազգայինը, որի հիմքում ընկած են՝ 1 լեզվամտածողությունը, 2 ազգային գաղա-փարախոսությունը, 3 ազգային արժեհամակարգը, 4 ավանդույթները: Թվարկվածը կարևոր է հատկապես երեխայի կրթության և դաստիարակության վաղ շրջանից նրա մեջ ներարկելը, քանի որ երեխան նման է ճերմակ թղթի, որի վրա պետք է գրել առանց ջնջումների, հակառակ պարագայում հետքերը կարող են տեսանելի մնալ նրա ամբողջ կյանքում: Մեր օրերում գնալով ավելի շատ է խոսվում նորագույն մեթոդների ներմուծման և կիրառության մասին: Գնալով ավելի մեծ տեղ է հատկացվում պրոբլեմային ուսուցմանը, շեշտվում է հատկապես զարգացնող կրթության, այսպես ասած, նորաձևությունը, որի առանձնահատկությունը այն է, որ ուղղված է աշակերտների ներուժի բացահայտմանն ու զարգացմանը, այլ խոսքով ստեղծել նոր

հասարակություն, կամ տեղեկատվական հասարակություն, որտեղ ուսուցումն ու դաստիարակությունը դարձել են ելակետային պահանջ: Քննենք նորագույն կամ ժամանակակից մեթոդների կիրառությունների առանձնահատկությունները: Քանի որ նորագույն մեթոդները այսօր կենտրոնացված են **«Զարգացնող կրթություն»**[1]ընդհանուր հասկացության տակ, ապա ուսուցչի գործը դառնում է փոքր ինչ դյուրին, որովհետև մեծանում է նրա ընտրության հնարավորությունը մեթոդի հարցում: Նորագույն մեթոդները աչքի են ընկնում իրենց պարզությամբ, մատչելիությամբ և սրանցից ամեն մեկը որոշակի միտվածությամբ ծառայում է երեխաների մեջ այս կամ այն ունակությունը զարգացնելուն: Ուսուցիչը նախապես պետք է սահմանի, թե այս կամ այն մեթոդի կիրառումով ի՞նչ է ակնկալում ստանալ աշակերտից և աշակերտի ո՞ր ունակությունն է զարգացնում, ո՞ր ունակության ձևավորման ուղղությամբ է աշխատում: Օրինակ «Ծրագրավորված ուսուցմամբ» ուսուցիչը լուծում է մի քանի խնդիր: Նախ նա իր և աշակերտների միջև ստեղծում է հետադարձ կապ, որի շնորհիվ կարող է իմանալ, թե աշակերտը որ թեման ինչպես է յուրացրել: Ապահովում է աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը: Հավասարապես ուշադրություն է հատկացվում բոլոր աշակերտներին: Այս դեպքում նյութը բաժանվում է իրար հետ կապված մասերի, որոնք տրվում են հատվածներով: Մի քանի վեկտորներով աշակերտները ստանում են գիտելիքներ և հենց իրենք կարող են ստուգել իրենց ու պարզել սեփական իմացության մակարդակը տվյալ նյութից: Կարծում ենք՝ տարրական դասարաններում, ներկայումս ուսուցման ամենահարմար ձևը **«Բազմաբնույթ մտածողության տեսությամբ»**[2] առաջնորդվելն է: Այս տեսությունը համակարգ է, որում ներառված ամենաբազմազան մեթոդները և ձևերը միտված են աշակերտների համակողմանի զարգացմանը: Հեղինակը Հովարտ Գարդներն է, աշխատությունը կոչվում է «Գիտակցության կառուցվածքը», և լույս է տեսել 1983թ.: Տեսության էությունը հետևյալն է.«Չափազանց կարևոր է ճանաչել մարդու բոլոր մտածողությունները և դրանց զուգորդման տեսակները»:

---

[1] Դասախոսություններ Լեզվի մեթոդիկա առարկայից, ՇՊՀ, Հումանիտար գիտությունների ամբիոն, դասախոսություն 11, էջ 48:

[2] Ս.Խաչատրյան, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում (օգնություն ուսուցչին), Գյումրի, 2006թ, հրատարակված է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ, էջ 6

Փաստորեն, նա ընդունում է մտածողությունը ոչ թե բանական երևույթ, որ միատարր է, այլ առանձին մտածողությունների գումար, կամ ավելի ճիշտ՝ մարդուն հատուկ են մտածողության ընկալման և իմաստավորման բազմապիսի ձևեր, ուստի ուսուցումն էլ պետք է ուղղված լինի մարդուն հատուկ մտածողությունների բավարարմանը: Գարդները առաջարկում է մտածողության 7 ձև, որոնց հետագայում ավելացնում է ևս 3-ը: Դրանք են՝ խոսքային-լեզվական, տրամաբանական, մաթեմատիկական, մարմնաշարժողական, տարածական, երաժշտական, ներանձնային, բնագիտական և հոգևոր: Տարրական դասարաններում պատմողական երկերի ուսուցումը կազմակերպելիս՝ կարելի է շեշտը դնել, օրինակ լեզվական-խոսքային, տարածական, ներանձնային և բնագիտական մտածողության տիպերի վրա: Սրանց մասին կխոսենք մեր աշխատանքի հաջորդ մասում, ավելի մանրամասն: Այստեղ նշենք հետևյալը՝ Բազմաբնույթ մտածողության տեսությամբ առաջնորդվելիս՝ գլխավոր տեղը ուսուցման պրոցեսում պիտի հատկացնել լեզվական- խոսքային մտածողությանը: Վերջինս դրսևորվում է որպես մտքերը, գաղափարները արտահայտելու միջոց, ինչպես նաև սրա միջոցով հաղորդակցություն իրականացնելը, ապա նաև ճիշտ շեշտադրությամբ խոսելը և այլն: Կարևոր է նաև տարածական մտածողության զարգացումը, հատկապես պատմողական բնույթի երկերի ուսուցման ժամանակ: Ըստ էության սա տեսողական տարածական կարողությունների զարգացմանն է միտված, որի օգնությամբ աշակերտները ճիշտ ու լրիվ են տես նում շրջապատի առարկաների ձևերը, գույները, կարողանում են նրանց միջև եղած կապը ընկալել: Եվ վերջապես, այս համակարգից կարելի է վերցնել նաև ներանձնային մտածողության զարգացումը, որը ենթադրում է ինքնաճանաչում, և որի միջոցով աշա-կերտները իրենք իրենց համար լրիվ պատկերացումներ են կազմում:

Քննադատական մտածողությունը աշակերտի մոտ պիտի ձևավորել դեռևս տարրական դասարաններում: Սա մտածողության մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել նյութը, մտածել դրա մասին, վերլուծել, զուգորդել իրականության հետ, ակնկալել արդյունք, կյանքում կիրառելու կարողություն: Մտածողության այս ձևը ունի մեթոդների իր համակարգը, որոնց էլ ուզում ենք անդրադառնալ: Առաջինը

արդեն քաջածանոթ **ԽԻԿ** համակարգն է, որն ենթադրում է եռափուլ համակարգ՝ Խթանում, Իմաստի ընկալում և Կշռադատում:[1]

Առաջին փուլում խթանվում են սովորողի առկա գիտելիքները տրված թեմայի շուրջ: Դա սովորողին պարտադրում է վերլուծել իր գիտելիքները և մտածել այն մասին, թե ինչ են այնուհետև մանրամասնորեն ուսումնասիրելու: Սա օգնում է նաև, որ սովորողը ճիշտ կարծիք ունենա իր գիտելիքի մակարդակների մասին և դրանք լրացնի մյուսների գիտելիքներով: Իրարից լսածն ու քննարկածը օգնում է, որ գիտելիքները ավելի հաստատուն լինեն: Այս փուլի էությունն այն է, որ նորը առնչվում է հայտնիին, գիտելիքները բխում են իրարից, ուղղվում են սխալները: Այս փուլի մյուս նպատակը սովորողներին ակտիվացնելն է, իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ սովորողը ձգտում է մտքերն արտահայտել իր բառերով, իր իմացածը ներկայացնել մյուսներին:

Իմաստի ընկալման փուլում սովորողը շփման մեջ է մտնում նոր մտքերի հետ: Այդ շփումը կազմակերպվում է տեքստի ընթերցման, ֆիլմի դիտման և այլ ձևերով: Այս փուլում սովորեցնողի ազդեցությունը նվազագույնն է սովորողի վրա: Այս փուլում հնարավոր է նաև բարձրացնել երեխայի հետաքրքրությունը: Օրինակ լավ արտասանությունը հետաքրքրություն է առաջացնում, շնորհիվ որի, սովորողները վերահսկում են իրենց իմաստավորումը, համեմատում են նոր իմացածը հնի հետ և այլն:

Կշռադատման փուլը յուրացման գործընթաց է, որը բնութագրվում է իրական և երկարատև փոփոխություններով, քանի որ աշակերտները մտովի կապ են ստեղծում նոր մտքերի, տեղեկությունների և հնի միջև, ձգտում են սեփական բառապաշարով վերարտադրել: Այս մտածողության մեթոդներն են **«Մտագրոհ», «Ուղղորդված ընթերցանություն», «Բանալի երևույթներ»** և այլն: Վերջինիս էությունը հետևյալն է.ուսուցիչը կարող է տեքստից ընտրել 4-5 բանալի բառեր և գրել գրատախտակին: Զույգերին տրվում է 5 րոպե, որպեսզի տան այդ բառ եզրույթների ընդհանուր մեկնաբանությունը և ենթա-դրեն, թե դրանք ինչպես կկիրառվեն պատմողական բնույթի երկերում: Հանձնարաելի է նաև **«Իմաստային խմբավորման»** (կլաստերների) մեթոդը: Սա ճկուն և բազմաբնույթ մեթոդ է: Սկզբնապես գրատախտակի կամ թղթի

[1] Ս.Խաչատրյան, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում (օգնություն ուսուցչին), Գյումրի, 2006թ, հրատարակված է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ, էջ 10, 11

կենտրոնում՝ շրջանակի մեջ գրվում է թեման, հետո դրա հետ կապված գաղափար, որը գրվում է թեման նշող բառից առաջ: Վերջինս վերցվում է շրջանի մեջ և միացվում կենտրոնում գրված թեմային: Հետո աշակերտները հերթով արտահայտում են իրենց մտքերը, ենթադրությունները: Երբ աշա-կերտները արդեն գրել են կլաստերները, խնդրում ենք ցույց տալ, թե որտեղ հայտնվեց քիչ տեղեկատվությունը: Եթե ինչ-որ բանում վստահ չենք՝ շրջանակի կողքին դնում ենք «՞» նշանը: Հետո սովորողներին պետք է խնդրել կարդալու ընթացքում հատուկ ուշա-դրություն դարձնել հետևյալի վրա.«Ինչո՞ւ էի ճիշտ», «ինչո՞ւ ճիշտ չէի», «ի՞նչ անհասկանալի բաներ պարզվեցին» և այլն: Խրախուսելի է նաև ուսուցչի կողմից հետևյալ ժամանակակից մեթոդների կիրառությունը՝ **«մտագրոհի մեթոդ», «ինտերակտիվ մեթոդ», «համագործակցային մեթոդ», «ինդուկտիվ մեթոդ», «հակադրության մեթոդ», «ԳՈՒՍ», «Խնդրահարույց վիճակ», «Փոխգործուն նշանների մեթոդ»** և այլն:

Համագործակցային ուսուցումը[1] ևս ժամանակակից մեթոդաբանության արդյունա-վետ մոտեցումներից մեկն է, որի առաջին դրսևորումները երևում են Ջոն Դյուիլի աշխատություններում: Սրանց հիմքում ընկած է այնպիսի մեխանիզմ, որը ժամանակակից մարդու, քաղաքացու կենցաղավարությանն է միտված, այսինքն՝ քաղաքացիներին սոցիալ- ժողովրդավարական համակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս: Այս սկզբունքների մշակմանը մասնակցում էր նաև Քըրթ Լևինը, որը մեծ տեղ է տալիս խմբային աշխատանքի դինամիկային:

Այս ուղղությամբ հետագայում ուսումնասիրություններ կատարեց Ջոնսոնը՝ համեմատությամբ ավանդական մեթոդների հետ: Նա իբրև չափանիշ՝ ընդունում էր խմբի արդյունավետության այն ցուցանիշը, որը ստացվում էր ուսումնառության արդյունքում: Սրանից հետո նրանք առաջարկեցին մոտեցումներ.օրինակ՝ համագործակցային մեթոդների կիրառումից առաջ ուսուցիչը պիտի մտածի հետևյալ հարցերի շուրջ.երբ ինքներդ աշակերտ էիք, ի՞նչն էր ամենաշատը դուր գալիս ձեզ, ինչը՝ ոչ, ի՞նչ կարող եք սովորել համատեղ աշխատելու ընթացքում: Համագործակցային արդյունքը բարձրացնելու համար պետք է սովորեցնել թիմերով

[1] Ս.Խաչատրյան, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում (օգնություն ուսուցչին), Գյումրի, 2006թ, հրատարակված է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան ինստի-տուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ, էջ 18-19

աշխատել։ Խրախուսելիս չառանձնացնել ամենաուժեղ աշակերտին, այլ ինչ-որ չափով ակնարկել։ Սրա համար ուսուցիչը պիտի ունենա՝ 1 դասի նպատակ, 2 շահագրգռվածության ապահովում, 3 տեղեկատվության ապահովում, 4 խմբերի ստեղծում, 5 խմբային աշխատանքի ղեկավարի դերի ընդգծում, 5 արդյուքի ներկայացում։

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները զույգերով աշխատում են միևնույն թեմայի հետազոտման համար։ Ճիշտ կազմակերպելու դեպքում աշակերտներից յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում ներկայացնելու իր տեսակետը և ծանոթանալու մյուսների տեսակետներին։ Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է՝ լայն առումով։ Աշխատանքի ընթաքում աշակերտները զգում են, որ ընդհանուր առաջադրանքը կատարելու համար իրենք միմյանց կարիքն ունեն։ Սրանով կձևավորվի նաև փոխօգնության մթնոլորտ։ Ներկայացնենք համագործակցային մի քանի մեթոդ։ Օրինակ՝**խմբավորման մեթոդ։** Այն կարելի է կիրառել մինչև թեմայի ավելի խոր ուսումնասիրությունը։ Այս մեթոդի կիրառման ժամանակ պետք է թեման ծանոթ լինի։ Կարելի է հանձնարարել գրել որևէ առանցքային բառ, ապա այդ բառը բնութագրող բառ-հասկացություններ, գրել գաղափարներ, որից հետո կատարել քննարկումներ, և ապա և անել եզրահանգումներ։ Դա կօգնի և՛ թեմայի յուրացմանը, և՛ բարոյական դաստիարակություն կտա։ **Հնգյակների մեթոդը** անդյունավետ է լեզվական գիտելիքների յուրացման տեսակետից։ Առաջին տողը մեկ բառ է, որը որևէ հասկացություն է։ Օրինակ՝ մարդ։ Երկրորդ տողը՝ այդ հասկացությունը բնութագրող երկու բառ՝ բարի, ազնիվ։ Երրորդ տողը երեք բառ է, որոնք արտահայտում հասկացության հետ կապված գործողություններ՝ քնած, երգող։ Չորրորդ տողը մեկ հոմանիշ բառ է, որը այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը՝ աղջիկ։ Կարելի է հինգ րոպեանոց շարադրություն տալ, որտեղ աշակերտները ամփոփում են իրենց տպավորությունները։ **Փոխգործուն մեթոդ։** [1]Կրթության որակը սովորաբար սահմանվում է այն տեսանկյունից, թե՝ 1 Ինչ ենք սովորեցնում, 2 Ինչպես ենք սովորեցնում, 3 Ում ենք սովորեցնում, 4 Ինչ է մնում մեր սովորեցրածից։ Ըստ էության՝

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 27։

սա դպրոցի արդյունավետության հայեցակարգ է, որը սովորողին տալիս է փոփոխվող հանգամանքներին արձագանքելու կարողություն, ուսումնական գործընթացի մասնակիցների բավարարվածություն և պարտավորություններ: Փոխգործուն մեթոդի գործադրման համար կարելի է մշակել քայլեր, այն է՝ ուսուցիչը առաջադրում է հարցեր, ապա ուսումնական նյութը չի հաղորդում, այլ մեկնաբանում է հարցադրումը, որից հետո աշակերտները անում են իրենց դիտարկումները: Լսվում են բոլոր կարծիքները: Ապա աշակերտներին տրվում է ուսումնական նյութի նախապես կազմված տեքստի կրկնօրինակը, որի վրա աշա-կերտները կատարում են իրենց դիտարկումները: Այս մեթոդը թույլ է տալիս ներգրավել բոլոր աշակերտներին: Հատկապես այն օգտակար է կիրառել խմբային աշխատան-քի ժամանակ: Փոխգործուն մեթոդներից արդյունավետ են **«Վեննի դիագրամը», «Խառնված հերթականությունների մեթոդ»** և այլն: Ասենք նաև, որ այս մեթոդը մանկա-վարժական հաղորդակցման համակարգի մի մասն է, վերոշարադրյալ մեթոդների հետ միասին: Այստեղ չպետք է մոռանանք նաև **«նախագծային աշխատանքի»** մասին:

Խոսելով այս մեթոդի մասին՝ մանկավարժ Սոնիկ Խաչատրյանը ճիշտ է նկատում, որ «այսօր մանկավարժության առաջնահերթ խնդիրն է՝ ձևավորված նպատակների իրականացումն ապահովող ուսուցման նոր մեթոդների որոնումը.սրանցից մեկն էլ նախագծային աշխատանքն է»:[1] Նախագծային ուսուցումը լայն ճանաչում ու կիրառություն է գտել ամբողջ աշխարհում: Այն նպատակային ուսուցման նորարարական մոտեցում է, որն իր մեջ ներառում է գործընթացի ժամանակային, արժեքային ու արդյունքների որակավորման և գնահատման պահանջներ: Այն ենթադրում է ուսուցման ողջ գործընթացի «նախագծում», ծրագրավորում, հեռանկարների որոշում, ուսուցման կազմա-կերպական ձևերի մշակում, գիտելիքի հաղորդում, կարողությունների ու հմտութ-յունների ձևավորում, սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի կազմակերպում, արդյունքների ստուգում և գնահատում: Այս մեթոդը նպաստում է սովորողների ակտիվության բազմապիսի ձևերի խթանմանը, նրանց գիտելիքների գործնական կիրառությանը: Նկատենք, որ այս մեթոդը ևս, ինչպես մյուս ժամանակա-կից մեթոդները դրսևորվում են, կամ հանդես են գալիս փուլերով, կամ քայլերի

[1] Նույն տույում, էջ 49:

տրամաբանական որոշակի հաջորդականությամբ և այս տեսակետից նախագծային մեթոդը ևս բացառություն չէ և ունի շրջափուլային բնույթ։ Դրանք են՝ 1 **Նախագծի մշակման փուլ**։ Նախագծի հիմնական բաղադրիչների մշակում և մասնակիցների նախաատրաստում և նախագծի խմբի և մասնակիցների որոշում, նպատակների ճշգրտում, հայեցակարգի զարգացում, հիմնական բովանդակության մշակում, գործադրվող մեթոդների ընտրություն, նախագծի աշխատանքային պլանների ձևակերպում։ **2 Նախագծի իրականացում**։ Այս փուլի մեջ մտնում են խմբային աշխատանքի կազմակերպումը, խթանման համակարգի կիրառությունը, ընթացիկ պլանավորումն ու շտկումները, բուն աշխատանքի կատարումն ու հսկողության համակարգի ճիշտ գործադրումը։ **3 Եզրափակման փուլ**։ Ավարտական գործընթացի պլանավորում, արդյունքների գնահատում և ամփոփում, վիճահարույց իրադրությունների հարթում, նախագծի փակում, հետագա աշխատանքի ուղիների և նոր նախագծերի նախանշում։ Կարելի է եզրակացնել, որ այս մեթոդը գալիս է լրացնելու ավանդական մեթոդների բաց կողմերը, ինքնորոշվածությունը, կամ միագիծ ուղղվածությունը։ Իր տեղում արդեն նշել էինք, որ նորագույն մեթոդները բազմավեկտոր բնույթ ունեն, և ժամանակակից մեթոդներից ամեն մեկը իր բնույթով ունի ոչ թե մեկ, այլ մի քանի խնդրի լուծման նպատակ է հետապնդում։ Կարծում ենք, հենց սա է նորագույն մեթոդների առանձնահատկությունը։

Որպես ամփոփում շարադրված առաջին մասի՝ կարելի է նշել, որ քննարկված բոլոր մեթոդների ընտրության ճշգրտությունից է կախված ուսուցման արդյունավետությունը։ Ուսուցիչն այնքան լավ պիտի իմանա իր աշակերտների իմացության աստիճանն ու հնարավորությունները, որ կարողանա տվյալ դասարանի կարողություններին համապատասխան մեթոդներ ընտրել և կիրառել։ Հիշենք, որ անկարևոր կամ ժամանակավրեպ մեթոդներ չկան, դրանց շունչ և արդիականություն հաղորդողը միայն ու միայն վարպետ ուսուցիչն է։

Գլուխ 2. ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

2.1 ՄԵԹՈԴՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻՍ

Տարրական դասարաններում զանազան ուսումնական նյութերի հետ միաժամանակ, ներառված են նաև պատմողական բնույթի ստեղծագործություններ։ Դրանցից են՝ հեքիաթները, առակները, առասպելներն ու լեգենդները, նաև ավանդությունները։ Ժողովրդական ստեղծագործության առաջին ժանրը, որին երեխան հանդիպում է դեռևս նախադպրոցական տարիքում՝ հեքիաթն է, որը մոտ ու հարազատ է երեխայի հոգուն։ Մեծ մանկավարժ Սուխոմլինսկին գրել է. «Բազմամյա փորձը համոզում է, որ գեղագիտական, բարոյական և մտավոր զգացմունքները, որոնք երեխայի հոգում ծնվում են հեքիաթային կերպարների տպավորության տակ, ակտիվացնում են մտքի հոսանքը, որն ակտիվ գործունեության է մղում ուղեղը, լիարյուն թելերով կապում մտածողության կղզիները»։[1]

Առաջին և երկրորդ դասարանների դասագրքերում եղած հեքիաթները արտահայտում են մի շարք գաղափարներ, որոնք դաստիարակչական և իմացական մեծ նշանակություն երեխաների համար։ Եթե դասակարգենք այդ հեքիաթներն ըստ իրենց դաստիարակչական ուղղվածության, ապա կարելի է ստանալ հետևյալը.

1.Ընկերասիրությանն ու հավատարմությանը նվիրված հեքիաթներ, որոնք այդ կարգի խոհեր զգացմունքներ են առաջացնում երեխաների մեջ, ուսուցչին հնարավորություն են տալիս նպատակային ու արդյունավետ աշխատանք տանել այդ ուղղությամբ։ Այս խմբին են պատկանում «Ճամփորդները», «Ինչպես շունը մարդուն ընկեր դարձավ» հքքիաթները։

2. Աշխատանքին ու աշխատասիրությանը նվիրված հեքիաթներ, որոնք հնարավորութ յուն են տալիս երեխաների մեջ հետաքրքրություն, սեր ու հարգանք առաջացնել աշխա տանքի, աշխատասեր մարդու և տարբեր մասնագիտությունների

---

[1] Ժամանակակից գիտական պրոբլեմների ուսումնասիրությունը բուհերում, միջբուհական գիտա-ժողովի նյութեր, 24-25 հոկտեմբերի, 2001թ.Գյումրի, 2002թ, «Իմաստասեր Անանիա Շիրակացու համալսարանի հրատարակչություն», էջ 73

նկատմամբ։ Այսպիսի հեքիաթներից են՝ «Հմուտ ձեռքեր», «Ագռավ եղբայրները», Ղ.Աղայանի «Անտառի մանուկը» հեքիաթները։ Ստախոսության մասին հեքիաթներ, որոնք հնարավորություն են տալիս երեխաների մեջ բացասական վերաբերմունք մշակել դեպի սուտն ու ստախոսությունը, արմատախիլ անել այս վատ հատկությունը, որը հաճախ են դրսևորում երեխաները։ Դրանցից են՝ «Մի կոտ ոսկին», «Պոչով սուտը» հեքիաթները։

3.Հնարամտության մասին հեքիաթներ։ Հնարամտությունը մարդկային բարձր հատկություններից մեկն է, հաճախ հիացմունք ու զարմանք է առաջացնում։ Այսպիսի հեքիաթներ են «Արևը, քամին ու ցուրտը», «Վագրն ու նապաստակը», «Նապաստակը դատավոր», «Աղջիկն ու երգը», «Ինչու է կատուն լվացվում ճաշից հետո», «Կամակոր թագավորը»։ Լրացուցիչ կարելի է հանձնարարել «Առյուծն ու կատուն» հեքիաթը։

4.Ագահությունը արգահատելի հատկություն է, և չպետք է թույլ տալ, որ այն ձևավորվի երեխաների մեջ։ Այս հարցում ևս մեծ օգնություն կարող են ցույց տալ հեքիաթները։ Այսպիսին է «Ագահ մարդը» հեքիաթը։ Լրացուցիչ կարելի է հանձնարարել «Ոսկե ձկնիկը» հեքիաթը։

5.Խորամանկության մասին հեքիաթներ։ Սրանք օգնում են երեխաների մեջ բացասական վերաբերմունք մշակելու այդ հատկության նկատմամբ։ Այդպիսի հեքիաթներ են «Աղվեսն ու այծը», «Վագրն ու աղվեսը»։ Լրացուցիչ կարելի է հանձնարարել «Գնդիկ բոքոնիկը» հեքիաթները[1]։

Անցնելով հեքիաթները՝ երեխաներն անմիջապես որսում են հեքիաթի հիմնական բարոյական գաղափարը։ Հարցերի միջոցով երեխաներին կարելի է ստիպել ինքնուրույն դատողություններ անել տվյալ հեքիաթում արտահայտված բարոյական որակների մա սին։ Շատ կարևոր են նախաատրաստական զրույցները, որոնք երեխաներից պահանջում են կոնկրետացնել իրենց բարոյական պատկերացումները։ Այդ նպատակով կարելի է վարվել այսպես.ընթերցել հեքիաթը և երեխաներին առաջարկել մտածել, թե նրանցից ով ինչպես կվարվեր տվյալ իրադրությունում։ Անմիջապես չպետք է պատաս-խան սպասել, այլ թողնել, որ այդ մասին նրանք տանը մտածեն։ Երկրորդ դասարանում անցնում են «Ագռավ

[1] << Ժամանակակից գիտական պրոբլեմների ուսումնասիրությունը բուհերում>> հատոր 4, միջբուհական գիտաժողովի նյութեր, 24-25 հոկտեմբերի 2001 թ.էջ 73։

եղբայրները» հեքիաթը, որտեղ նկարագրված է թե ինչպես երկու ագռավ եղբայրներ այնքան անբան են լինում, որ նույնիսկ ծուլանում են վերանորոգել իրենց բույնը: Վրա է հասնում ձմեռը, և նրանք ցրտից սառչում են ու սատկում: Հեքիաթն ավարտելուց հետո կարելի է երեխաներին հարցնել, թե իրենք ինչպես են գնահատում ագռավ եղբայրների արարքը: Աշակերտները գալիս են եզրակացության, որ ագռավ-ները սխալ են վարվել, որ անրաժեշտ էր ժամանակին նորոգել բույնը: Այնուհետ կարե-լի է փոքրիկ զրույց կազմակերպել աշխատասիրության մասին, կոնկրետ փաստեր բե-րել դասարանից, շրջապատից, թույլ տալ, որ աշակերտներն իրենք գնահատեն նման արարքները և հանգեն ճիշտ եզրակացության: Որից հետո կարելի է կարդալ «Ճպուռն ու մրջյունը» առակը: Առանց որևէ միջամտության երեխաները համեմատում են այդ երկու ստեղծագործությունները և կարողանում են նույնացնել ճպուռի ու ագռավների արարքները, քննադատել նրանց ծուլությունը: Կազմենք «Ագռավ եղբայրները» հեքիաթի ուսուցման պլան:

Դասարան՝ 2-րդ

Ուսուցչուհի՝ Պետրոսյան

Դասի տիպը՝ համադրական

Կիրառվող մեթոդներ՝ զրույց, բացատրական ընթերցանություն , հարցուպատասխան

Թեման՝ «Ագռավ եղբայրները» հեքիաթը

Նպատակը՝ հեքիաթի ուսուցմամբ և երեխաների շնորհիվ կարևորել աշխատանքի դերը մարդու կյանքում, զարգացնել երեխաների մեջ աշխատասիրության զգացում:

Դասի ընթացքը՝ Նյութի հաղորդումից առաջ՝ կազմակերպում ենք զրույց աշխատասիրության մասին: Ո՞ր կենդանին է ամենաաշխատասերը, ի՞նչ կլինի, եթե նա չաշ-խատի: Այնուհետ, նյութը հաղորդում ենք բացատրական ընթերցանության մեթոդով:

Ամփոփում՝ Նյութը կարող ենք ամփոփել քառաբաժան աղուսյակի մեթոդով, կամ հարցման միջոցով:

Հեքիաթներում արտահայտված բարոյական գաղափարներն ավելի խորացնելու համար կարելի է դիմել համեմատությունների՝ օգտագործելով բնագրի բովանդակությունը՝ երեխաների վարքագիծը նմանեցնել համապատասխան հերոսի

վարքագծին: Նման զուգորդումները զարգացնում են երեխաների տրամաբանական մտածողությունը և նպաստում այս կամ այն գաղափարը նրա համար վարքագծի չափանիշ դարձնե լուն:

Պետք է նաև մեծ տեղ հատկացնել երեխաների կողմից ինքնուրույն հեքիաթներ հորինելուն: Թեև շատ պարզունակ, բայց յուրաքանչյուր հորինվածքի մեջ կարելի է գտնել ստեղծագործական մի փոքրիկ յուրօրինակ կայծ: Հեքիաթներում արտահայտված բարոյական գաղափարները կարելի է իմի բերել՝ օգտագործելով ժողովրդական առածներն ու ասացվածքները: Օրինակ «Պոչով սուտը» ժողովրդական հեքիաթը ներկայացնելուց հետո երեխաներին հանձնարարել գտնել ասացվածքներ, որոնք համապատասխանեն ընթերցված հեքիաթի բովանդակությանը: Կարելի է ասել հետևյալ ասացվածքները՝ «Ստի ոտը կարճ է լինում», «Սուտասանի տունը կրակ ընկավ, ոչ ոք չհավատաց» և այլն: Երբեմն հեքիաթի հիմնական գաղափարը կարելի է սկսել ասացվածքներից: Երեխաների հետ կարդալով և վերլուծելով ասացվածքը՝ կարելի է պարզել թե ով ինչպես է հասկանում, ինչ բարոյական գաղափար կա այնտեղ, հետո միայն ընթերցել հեքիաթը: Այս դեպքում արդեն երեխաներն անմիջապես կկռահեն տվյալ հեքիաթում դրված բարոյական գաղափարը: Կարելի է համառոտ նշել հեքիաթների տեսակները՝ հրաշաատում, իրապատում, կենդանական, և թե սրանցից որն ինչ է իրենից ներկայաց նում, ապա նաև նշել, թե ուսուցչի կողմից կարդացվող կամ պատմվող հեքիաթը, որ տեսակին է պատկանում: Նշենք, որ տարրական դասարաններում հանձնարարելի են միայն կենդանական և իրապատում հեքիաթները:

Հեքիաթները, առասպելները, առակները, որպես կանոն, վառ երևակայության արդյուք են: Ուստիև զարգացնում են երեխայի կամ կրտսեր դպրոցականի երևակայությունը, ձևավորում՝ ստեղծագործական հատկանիշներ: Առակների ուսուցումը տարրական դասարաններում՝ սկսվում է 2-3րդ դասարաններում: Նախ պետք է երեխային մի փոքր գաղափար տալ առակի մասին: Օրինակ, նշել, որ առակը հեքիաթի նման, ոչ մեծ սյուժե ունեցող փոքր ծավալի երկ է, այն ծագել է կենդանիների մասին հեքիաթների հիմքի վրա, բայց նրանից տարբեր ժանր է, որովհետև նախ հեքիաթից ավելի փոքր է ծավալով, ապա նաև ի տարբերություն հեքիաթների՝ առակի վերջում նշվում է, թե ինչ է այն մեզ սովորեցնում, որն է գաղափարը և այլն: Այս երկու

ժանրերի նմանության և տարբերության մասին այսքանն էլ բավարար է տարրական դասարաններում սովորողների համար։ Հատկաես պիտի նշել, որ եթե հեքիաթի ժանրի տեսակներից, օրինակ իրապատում հեքիաթներում խոսք չի կարող լինել միֆական մտածողության մասին, կամ հրաշապատում հեքիաթների հիմքում ընկած ֆանտաստիկ հնարքն այստեղ բացակայում է, ապա առակները նախ նման խմբավորում չունեն, ապա հեքիաթների նման չեն սկսվում բնորոշ «լինում է, չի լինում», «կար, չկար», «ժուկով ժամանակով» և նմանատիպ այլ արտահայտություններով։ Առակները գերազանցապես այլաբանական հիմք ունեն, հեքիաթները այդ հիմքը կարող են նաև չունենալ։ Կարծում ենք՝ առակի ուսուց-ման ժամանակ տեղին կլինի նախ ժանրի անվանման մեկնաբանությունը տալը, սրա-նով նաև կընդլայնենք աշակերտի լեզվական իմացությունը։ Օրինակ՝ ուսուցիչը առակի ժանրի մասին խոսելուց առաջ մեկնաբանում է, որ առակ բառը գալիս է դեռ միջնա-դարից և նշանակում է աչքի առաջ ունենալ > առակն ձևից։ Արժե հիշել նաև, որ առակ-ների վերջում հաճախ տրվում է հավելյալ ստուգող, կամ իմացածը իմաստավորող կամ ամրապնդող հարց, օրինակ «առակը ի՞նչ է ցույց տալիս, սովորեցնում»։ Տեղեկատվության տրամադրումը տարրական դասարաններում՝ կապված այս կամ այն ժանրի հետ, պիտի լինի հակիրճ, հիմնավոր, սեղմ։ Չարժե երեխային ծանրաբեռնել հավելյալ, անհարկի տեղեկատվությամբ։ Երեխաներին կարելի է ծանոթացնել տվյալ առակի հեղինակի կենսագրության որոշ կարևոր հանգամանքների։ Օրինակ, երբ սովորեցնում ենք, ասենք Այգեկցու առակներից մեկը, ասենք «Առյուծը և մարդը» առակը՝ կարող ենք մինչ այդ համառոտակի նշել՝ ով է Այգեկցին, երբ և որտեղ է ծնվել, ինչ է արել, ինչ է գրել և երբ է մահացել։ Առասպելներն ու լեգենդները ևս պատմողական ժանրի երկեր են, որոնք ուսուցանվում են դեռևս տարրական դասարաններում։ Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ ժամանակակից դպրոցում ուսուցանվում են նաև չափածո հե-քիաթներ։ Սրանց առավելությունն այն է, որ երեխաների համար շատ ավելի հեշտ է սովորել չափածոն, քան հեքիաթը իր հիմնական արձակ շարադրությամբ։ Պատմողա-կան ժանրի երկերից տարրական դասարաններում ուսուցանվում են նաև ավադութ-յունները։ Այսպես օրինակ՝ 3-րդ դասարանի մայրենի լեզվի դասագրքում տեղ է գտել նաև Մխիթար Հերացու մասին ավանդությունը։ Ասենք, որ տարրական դասարանների

դասագրքերում պատմողական բնույթի երկերը ներկայացվում են մշակված, սովորողներին մատչելի ու հասանելի ձևով։ Հասկանալի է, որ այս պարագայում երեխաները հեշտ ու հաճույքով են սովորում։ Ի՞նչ առանձնահատկություններ ունեն պատմողական բնույթի երկերը, որոնք ուսուցանվում են տարրական դասարաններում։

1.Հարստացնում են երեխայի գիտելիքները ամենատարբեր բնագավառներից։
2.Օժտված են դաստիարակչական մեծ նշանակությամբ։
3.Սովորեցնում են երեխաներին մտածել և ընտրություն կատարել գեղեցիկի և տգեղի միջև, մերժել բացասականն ու որպես օրինակ վերցնել բարին, դրականն ու լավը։
4.Զարգացնում են երեխաների մեջ հայրենասիրություն և քաջություն։ (Հայկի և Բելի առասպելը և այլն)։

Նաև նշենք, որ վերոհիշյալ ժանրերի ուսուցումը տարրական դասարաններում կարելի է իրականացնել ամենաբազմազան մեթոդներով՝ և՛ ավանդական, և՛ ժամանակակից։ Իսկ թե որ նյութի ուսուցումը որ մեթոդով իրականացնել՝ մնում է արդեն ուսուցչի հայեցողությանը։

Ուսուցման մեթոդական համակարգը կառուցված է այնպես, որ նույն նյութը հնարա-վոր է ուսուցանել մի քանի մեթոդներով և ստանալ նախատեսված ցանկալի արդյունք։ Ուսուցման ընթացքում կարելի է օգտվել երկու և ավելի մեթոդներից միաժամանակ։ Դա ցույց տանք նույն նյութի համար նախատեսված դասավանդման պլանների օրինակով։

Դասարան՝ 3-րդ

Ուսուցչուհի՝ Պետրոսյան

Դասի տիպը՝ խառը

Կիրառվող մեթոդներ՝ Զրույց, բացատրական ընթերցանության մեթոդ

Թեման՝ «Մեր Անդրանիկը»

Հեղինակներ՝ Վ.Սարգսյան, Հ.Խաչատրյան, Կ.Թադևոսյան, Ե.Ջիլավյան

Նպատակը՝ Ծանոթանալ Անդրանիկ Օզանյանի կերպարին, իմանալ նրա գործունեության և հերոսության մասին։ Դաստիարակել հայրենասիրության և մարդասիրության ոգով։

Դասի ընթացքը՝ Մինչ «Մեր Անդրանիկը» [1]տեղեկատվական նյութի ընթերցումը՝ գործածում ենք զրույցի մեթոդը։ Երեխաները դեռ առաջին դասարանից գիտեն Անդրանիկի մասին։ Ուստի կարելի է երեխաներին հղել հետևյալ հարցը.«Երեխաներ ի՞նչ գիտենք Անդրանիկի մասին, ո՞վ է նա»։ Լսում ենք բոլորի պատասխանները անխտիր, ուղղում ենք սխալները, խրախուսում ճիշտ պատասխանները։ Հետո ընթերցում ենք նյութը մեկ անգամ։ Ավարտելուց հետո կարելի է խնդրել նրանց բնութագրել հերոսին, ի՞նչպես պատկերացրին նրան։ Այս նպատակով կիրառում ենք «հարցուպատասխանի» մեթոդը, կամ ավելի խրախուսելի է «**քառաբաժան աղյուսակի**» մեթոդը։ Այստեղ երեխաները չորս աղյուսակներում լրացնում են ինչ գիտեի, ինչ նոր բան իմացա, ինչ զգացի աղուսյակները, իսկ վերջին վանդակում փորձում են նկարել իրենց պատկերացումը նյութի վերաբերյալ։

Ամփոփումը կարելի է կատարել կլաստերների մեթոդով, երեք բանալի մեկ կողպեք մեթոդով և այլն։

Պետք է նշել, որ թեմայի համար կարելի է կիրառել նախաատրաստական զրույցը։ Կարելի է, օրինակ ամփոփման փուլը իրականացնել «բովանդակության վերարտադրում» մեթոդով։ Ոչինչ, որ երեխաները սխալներով կարող են վերարտադրել նյութը, դրանք կարելի է ուղղել և ամրապնդել գիտելիքը։ Հետևաբար այստեղ կարելի է նշել, որ զրույցը և բացատրական ընթերցանությունը զուգադրելի մեթոդներ են։ Օրինակ՝ բացատրական ընթերցանության ժամանակ անպայման պիտի մեկնաբանել նյութի առաջին նախադասությունը։ «Անդրանիկ Օզանյանը ծնվել է Շապին Գարահիսարում»։ Մի պահ ուսուցիչը կարող է շեղվել նյութից՝ մեկնաբանելով.«Երեխանե՛ր Անդրանիկի ծննդավայր Շապին Գարահիսար քաղաքը գտնվում է ժամանակակից Թուրքիայում։ Այս քաղաքը ժամանակին հայկական բնակավայր է եղել, բայց պատմական հանգամանքների բերումով այժմ պատկանում է Թուրքիային»։ Սա էլ բավական է, չարժե շատ խորա-նալ պատմական հանգամանքների մեջ։ Կարևորը երեխային ճիշտ և անհրաժեշտ չա-փով տեղեկություն տալն է։ Իսկ հնարավո՞ր է այս նույն նյութը հաղորդել մեկ այլ մեթո-դով, կամ թեկուզ ամփոփել ժամանակակից որևէ այլ մեթոդով, իհարկե կարելի է։ Այս

[1] Վ.Սարգսյան, Հ.Խաչատրյան, Կ.Թորոսյան, Ե. Ջիլավյան, Մայրենի 3 դասագիրք, «Մեր Անդրանիկը» կենսագրական հաղորդում, Երևան, «Մանմար» հրատարակչություն, էջ102

նույն նյութը կարելի է հաղորդել, օրինակ նախորդ գլխում հիշված Գյուլամիրյանի ուսուցման սխեմայով։ Դրա համար կարելի է վերցնել օրինակ 2-րդ և 3-րդ կետերը։ «Նախ աշխատանք ընթերցված սյուժեի շուրջ և գրական հերոսի դիմագծի ընկալում և խորացում»։[1] Ուսուցիչը շեշտը տվյալ դեպքում դնում է «Անդրանիկի կերպարի ընկալումը աշակերտների կողմից» խնդրի վրա։ Ելնելով այս նպատակից՝ խրախուսելի է հե-րոսի մասին լրացուցիչ տեղեկատվություն տալը, կամ նրան նվիրված որևե երգ խմբով դասարանում լսելը և այլն։ Ինչևե, հնարները շատ են՝ նյութը, թեման տրամադրող։ Մանավանդ որ դասագրքում տրված է հերոսի մասին եղած ավանդապատումներից մեկը։ Սա ևս կարելի է աշակերտներին հանձնարարել սովորել պատմել, և քննարկել, «ի՞նչ եք կարծում, եղել է այդպիսի բան, թե՞ ոչ», «ի՞նչ հասկացաք նյութից» և այլն։ Այժմ փորձենք կազմել այս նյութի հաղորդման համար պլան՝ այլ մեթոդներով։ Վերցնում ենք բազմաբնույթ մտածողության մեթոդը, հատկապես թեմայի ուսուցման համար շեշտը դնելով տրամաբանական մտածողության վրա։ Որպեսզի պատկերը ամբողջանա՝ տրամաբանական մտածողության հետ զուգադրում ենք «խելացի ինչուների» մեթոդը։ Օրինակ ուսուցիչը դասարանին հարց է տալիս.«Երեխաներ ի՞նչ էք կարծում ինչո՞ւ է Անդրանիկը այդքան սիրված հայ ժողովրդի կողմից»։ Վերստին երեխաները հիշում են հերոսի մասին իրենց գիտելիքները և եզրակացնում, որ հայրենասիրությունը ամենա-նվիրական զգացմունքներից մեկն է, և պետք է ձգտել լինել նրա նման խիզախ ու հայրե-նասեր։ Ինչպես նշել ենք՝ տարրական դասարաններում ուսուցանվող պատմողական ժանրերից են նաև առասպելները։ Հատկապես ընդունված է «Հայկ և Բել» առասպելի ուսուցանումը։ Նախ ուսուցիչը թեմայի ուսուցումը կազմակերպելուց առաջ պիտի նշի, թե թեման ինչ ժանրի է պատկանում։ Օրինակ 3-րդ դասարանի մայրենի լեզվի դասագրքում տեղ է գտել հիշյալ առասպելը։[2] Նշվում է նախ առասպելի ժանրի բնութագիրն ու էությունը, ապա նաև այն, որ մեր անցնելիք նյութը պատկանում է առասպելի ժանրին։ Որից հետո ուսուցանվում է նյութը։ Կազմենք դասի պլանը, խոսենք թեմայի խն-դիրների մասին, այսինքն թե թեման ինչ խնդիրներ է հետապնդում։

---

[1] «Մանկավարժական միտք» հանդես, Երևան, 2013թ, էջ 147-148, Կարդացած բնագրի շուրջ տարվող աշխատանքը չորրորդ դասարանում

[2] Մայրենի 3 դասագիրք, «Հայկ և Բել», Երևան, «Մանմար» հրատարակչություն, էջ 82

Դասարան՝ 3-րդ

Ուսուցչուհի՝ Ս.Պետրոսյան

Դասի տիպը՝ համադրական

Դասի թեման՝ «Հայկ և Բել առասպելը»

Օգտագործվող մեթոդներ՝ «հարցում», «ամփոփում», «կլաստերների մեթոդ»

Նպատակը՝ ստուգել յուրացված գիտելիքները թեմայից

Ուսուցիչը նոր նյութը հաղորդելուց հետո պիտի կատարի նաև նյութի կամ թեմայի ամրապնդում: Այդ նպատակին հասնելու համար խրախուսելի է, որ ամրապնդումը կատարվի ոչ թե ուսուցչի կողմից երեխաներին հարցեր տալով, այլ հենց երեխաների կողմից և նրանց միջով հաղորդված նյութի ամփոփում կատարելով: Սա չի նշանակում, թե երեխաներին հարցեր չպետք է տալ, այլ պիտի թողնել, որ երեխաները իրենք ցուցադրեն իրնց սովորածը: Այս միջոցով շատ ավելի հեշտ կերևա երեխաների կողմից նյութի յուրացվածության աստիճանը: Այդ նպատակով նյութի հաղորդումից հետո կիրառում ենք **կլաստերների մեթոդը**[1]**:** Սա արդյունավետ է խթանումն իրականացնելու համար: Գրատախտակի կենտրոնում գրում ենք Հայկ անունը: Այնուհետ արտահայտում ենք «ի՞նչ է արել նա» գաղափարը: Սա գրում ենք շրջանակի մեջ՝ Հայկ անունից առաջ: Սխեման կունենա հետևյալ պատկերը: Հրավիրում ենք սովորողներին գրելու իրենց իմացածը արտահայտող որևե բառ: Կհնչի օրինակ՝ «Հաղթել է Բելին»: Գրում ենք հարցը նշող վանդակի վերևում: Եթե հայտնվում են նոր մտքեր՝ գրում ենք առանձին վանդակում: Օրինակ՝ դա կարող է լինել նրան բնութագրող մեկ այլ բառ, և ոչ թէ նրա գործունեության հետ կապված: Չպիտի անտեսել նաև սովորողի արտահայտած այսպիսի մտքերը: Կարող է լինել «Նա ուժեղ է» տարբերակը, կամ «քաջ է» և այլն:



[1] << Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա>> առրկայի փաթեթ, էջ 12, ՇՊՀ:



Այս դեպքում արդեն բառերը, որոնք բնութագրական են՝ գրվում են Հայկ անունից ներքև։ Ուսուցիչն ինքն էլ կարող է օգնել երեխաներին՝ լրացնել աղյուսակը նոր հականիշներով, որպեսզի պատկերն ամբողջանա։ Նման մոտեցումը ընդունելի է, որովհետև ամեն մի հատկանիշի նշում, օգտակար կարող է լինել երեխայի համար։ Պարզ է, տարրական դասարանի աշակերտից չպիտի սպասել այնպիսի ածականներ, որոշիչներ, որոնք դժվար մտապահվող են, կամ նույնիսկ երեխաները դրանք կարող են չիմանալ։ Կարելի է գրել նման մեկ երկու բառ և դրանց իմաստը մեկնաբանել աշակերտներին։ Օրինակ՝ մեր գծապատկերում այդպիսիք կարող են լինել **քաջ** և **խիզախ** բառերը։ Նշում ենք, որ «քաջ»ը և «խիզախ»ը նույն իմաստն ունեցող հոմանիշներ են, որոնցով բնութագրել ենք Հայկին։

Հիմա ըստ մեր կազմած երկու պլանների՝ փորձենք որոշել հիշյալ մեթոդների միջև եղած փոխադարձ կապերը։ Դա պարզելու համար բավական է անել մի պարզ հարցադրում։ Հնարավո՞ր է մեր կազմած պլանների մեջ նշված մեթոդները փոխարինել մեկը մյուսով։ Իհարկե կարելի է։ Կարելի է Անդրանիկին բնութագրել «կլաստերների մեթոդով», կամ «Հայկի ու Բելի» առասպելը ուսուցանել զրույցի մեթոդով։ Ուրեմն կարելի է նշել, որ փոխարինվող այս մեթոդները հոմանիշ մեթոդներ են։ Եվ առհասարակ չկան անփոխարինելի մեթոդներ, կա դրանց ճիշտ ու սխալ կիրառություն։ Կարող են լինել նաև այնպիսի մեթոդներ, որոնք նպատակահարմար չեն տվյալ թեմայի ուսուցման համար, բայց դա չի նշանակում, թե դրանք

արդյունավետ չեն առհասարակ։ Այսպես՝ **խմբային աշխատանքի** մեթոդով կարելի է իրականացնել, օրինակ, «Թութակը» զրույցի ուսուցումը 3-րդ դասարանում։[1] Այդ նպատակով նախապես պետք է մեկ անգամ երե-խաների համար ընթերցել նյութը։ Հետո դասարանը բաժանում ենք խմբերի և հանձնա-րարում ինքնուրույն ընթերցել նյութը։ Ապա աշակերտներին խնդրում ենք կարդալուց հետո գրել, թե ի՞նչ սովորեցին, ինչպիսի՞ն էր թութակը, ինչո՞ւ էր տխուր նա, հնարա-մի՞տ էր նա, թե՞ ոչ, ճի՞շտ վարվեց, որ խաբեց նավաստուն, թե՞ ոչ։ Հիշյալ հարցադրումները կօգնեն երեխաներին՝ յուրացնել նյութը, խմբային քննարկումը կօգնի, որ երե-խաները երկար մտապահեն նյութը։ Տարրական դասարաններում՝ ինչպես նշեցինք, ուսուցանվում են նաև հեքիաթներ։ 3- րդ դասարանի մայրենի լեզվի դասագրքում տեղ է գտել նաև Վասիլի Սուխոմլինսկու «Մայր սագի հեքիաթը»։ Հաշվի առնելով հեքիաթի ծավալը՝ այն բաժանված է երեք մասի։ Յուրաքանչյուր մաս կարելի է ուսուցանել առանձին - առանձին՝ ամեն մասի համար ընտրելով տարբեր մեթոդներ։ Օրինակ հե-քիաթի ամբողջական ընթերցումից հետո կարելի է կիրառել **«կատեխիզիսի մեթոդը»։** Երխաներին կարելի է հարցնել, թե օրինակ ինչպե՞ս կգնահատեն մայր սագի արարքը։ Բնութագրե՛ք ձագերին։ Ինչպե՞ս կգնահատեք փոքրիկ ձագի արարքը, որ մոտեցավ մայրիկին և հարցրեց, թե ինչո՞ւ են վիրավոր նրա թևերը։ Ի՞նչ սովորեցիք այս հեքիա-թից։ Ամփոփման փուլում կարելի է հանձնարարել կարճ շարադրություն՝ «Իմ մայրիկը» վերնագրով։ Մեթոդների փոխադարձ կապը կարելի է պարզել նաև դրանց համադրա-կան կիրառության մեջ։ Օրինակ՝ **«զրույցի»** և **«բացատրական ընթերցանության»** մեթոդի միջև, **«հարցման»** և **«հնգյակների մեթոդով»** և այլն։ Ցույց տանք զրույցի և բացատրական ընթերցանության միջև եղած կապը։ Նախ և առաջ ընդհարությունը նրանում է, որ զրույցի մեթոդով աշակերտներին ընդհանուր տեղեկություններ են տրվում նյութի բովանդակության և գաղափարի մասին, բացատրական ընթերցանությամբ արդեն խորացվում է նյութի գաղափարի յուրացումը աշակերտների կողմից։ Ավելի շուտ սրանք միմյանց փոխլրացնող մեթոդներ են։ Ենթադրենք, որ տարրական դասարանի աշակերտներին սովորեցնում ենք «Իմաստուն զինվորը» առակը։ Պարտադիր չէ խոսել անպայման բուն առակի մասին։ Կարելի է զրույց սկսել, օրինակ հայրենասիրության մասին։ Երեխաներին

[1] Մայրենի 3 դասագիրք, «Թութակը» զրույց, Երևան, «Մանմար» հրատարակչություն, էջ 12

հարցնել. «Երեխաներ դուք սիրո՞ւմ էք ձեր հայրենիքը», կամ «Ին-չո՞ւ է անհրաժեշտ հայրենիքին ծառայելը», «Ինչպե՞ս կմեկնաբանեք ի՞նչ է հայրենասիրությունը» և այլն։ Լսելով և ամփոփելով տրված պատասխանները՝ կարելի է անցնել առակի դասավանդմանը։ Ապա կարելի է կիրառել բացատրական ընթերցանությունը, առակը կարող են կարդալ և՛ ուսուցիչը, և՛ աշակերտները։ Ուսուցիչը կարող է կարդա-լու ընթացքում անել տարբեր մեկնաբանություններ։ Ապա առակի ընթերցումից հետո կարելի է կիրառել հարցուպատասխանի մեթոդը։ «Բնութագրի՛ր իմաստուն զինվորի արարքը», «Ինչո՞ւ նա այդպես պատասխանեց մյուս զինվորի հարցին», «Արդյո՞ք ճիշտ կվարվեր զինվորը, եթե փախչեր մարտի դաշտից» և այլն։ Տրված հարցերի պատաս-խանները ստանալուց հետո, կարելի է նորից **հնգյակների մեթոդով** ամրապնդել գիտելիքները։ Այսպես, օրինակ առաջին տողում աշակերտներին հանձնարարում ենք գրել զինվոր բառը։ Երկրորդ տողում նրան բնութագրող երկու բառ՝ քաջ, տոկուն։ Ե-րրորդ տողում երեք բառ, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ՝ զինված, կռվող և հաղթող։ Չորրորդ տողում կգրենք մեկ հոմանիշ, որն այլ կերպ արտահայտի նույն հասկացությունը՝ ասենք «մարտիկ»։ Կարող ենք տալ հինգ րոպեանոց շարադրություն՝ «Բնութագրի՛ր զինվորին» վերնագրով։ Սա լավա-գույնս կօգնի թե՛ դասի յուրացմանը, թե՛ հայրենասիրական զգացմունքների դաստիա-րակմանը երեխայի մեջ, թե՛ նրա բարոյական որակների ձևավորմանը։ Ահա դասի պլանը.

Դասարան՝ 4-րդ

Ուսուցչուհի՝ Ս. Պետրոսյան

Դասի տիպը՝ համադրական

Կիրառվող մեթոդներ՝ Զրույց, հարցում, հնգյակներ, բացատրական ընթերցանություն

Թեման՝ «Իմաստուն զինվորը» առակը

Նպատակը՝ առակի ուսուցանում, հայրենասիրության զգացման կարևորումը և զարգացումը տարրական դասարաններում։

Դասի ընթացքը՝ Մինչ նյութի ուսուցանումը՝ կազմակերպում ենք զրույց հայրենասիրության վերաբերյալ։ Ի՞նչ է այն, ո՞վ է հայրենասեր մարդը, ի՞նչ է ձեզ համար հայրե նիքը։ Հետո հաղորդում ենք նյութը բացատրական ընթերցանությամբ, ատասխանում աշակերտների հարցերին, եթե այդպիսիք կան։ Ամփոփում ենք նյութը

հարցման կամ հնգյակների մեթոդով, կարող ենք անգամ երկու մեթոդներն էլ կիրառել ամփոփման փուլում՝ միաժամանակ։

Մեթոդների փոխադարձ կապը ցույց տալու համար կարելի է նշել նաև հետևյալ օրինակը. քառաբաժան աղուսյակի մեթոդը կարելի կիրառել կլաստերների մեթոդի, հարցուպատասխանի մեթոդի փոխարեն։ Մեթոդների փոխադարձ կապը պայմանաորված է նաև դրանց միջև եղած որոշակի ընդհանրություններով։ Կոնկրետ այս դեպ-քում ընդհանուրը այն է, որ ըստ էության, քառաբաժան աղուսյակն էլ հարցուպատասխան է ենթադրում, միայն թե այստեղ փոքր է հարցերի շրջանակը։ Եվ վերջապես մեթոդների միջև ընդհանրությունները կարող են լինել ոչ միայն նպատակին հասնելու տեսակետից, այլև դրանց էության միջև։ Այդ նույն փոխադարձ կապը կարելի է տեսնել ժամանակակից և ավանդական մեթոդների միջև։ Կարելի է տեսնել միայն ժամանակակից կամ միայն ավանդական մեթոդների միջև։ Ասվածը ցույց տանք ևս մեկ օրինակով. Երկրորդ դասարանի մայրենի լեզվի դասագրքում ևս տեղ են գտել պատմողական բնույթի ստեղծագործություններ՝ հեքիաթներ, զրույցներ, փոքր պատմվածքներ։[1] Վերցնենք դրանցից մեկ-երկուսը, և ցույց տանք դասավանդման պլաններով։

Դասարան՝ 2-րդ

Հեղինակներ՝ Վաչագան Ա. Սարգսյան, Սուսաննա Գրիգորյան, Կարինե Թորոսյան, Հեղինե Խաչատրյան

Ուսուցչուհի՝ Ս.Պետրոսյան

Դասի տիպը՝ խառը

Կիրառվող մեթոդներ՝ «Քառաբաժան աղուսյակ, հարցուպատասխան, կլաստերների մեթոդ

Թեման՝ «Գլխարկավաճառն ու կապիկները» պատմվածք

Նպատակը՝ Հեքիաթի ուսուցում, հնարամտության զարգացում, դժվար դրության ժա-մանակ արագ կողմնորոշվելու հատկության զարգացում։

Դասի ընթացքը՝ Կիրառում ենք ընթերցանության մեթոդը։ Նախ կարդում ենք նյութը մեկ անգամ, երեխաները լսում են, ապա հանձնարարում ենք ընթերցել նյութը

[1] Մայրենի 2-րդ դասագիրք, «Գլխարկավաճառն ու կապիկները», Երևան, «Մանմար» հրատարակչություն, 2020թ, էջ 116

ևս մեկ անգամ՝ բարձրաձայն: Իրականացնում ենք նյութի քննարկում՝ զրույցի ու հարցու-պատասխանի պատասխանի մեթոդով: Նյութը ամփոփում ենք «Քառաբաժան աղուս-յակի մեթոդով:

Ի՞նչ գիտեմ	Ի՞նչ հասկացա
Կապիկները հետաքրքրիր և խելացի կենդանիններ են:	Հնարամտությունը շատ օգտակար հատկանիշ է կյանքում:
Ի՞նչ զգացի	**Նկարիր պատկերացրածդ**
Գրխարկավաճառի հուսահատ և ծիծաղելի վիճակը:	

Այնուհետ՝ այս մեթոդը կարող ենք փոխարինել հարցուպատասխանի մեթոդով՝ երեխաներին տալով հետևյալ հարցերը.

1. Անտառում ի՞նչ պատահեց գլխարկավաճառի հետ:
2. Ինչո՞ւ գլխարկավաճառն իր գլխարկը խփեց գետնին:
3. Ինչո՞ւ կապիկները գխարկները նետեցին գետնին:
4. Այս պատմության մեջ ի՞նչն է ծիծաղելին:

Նույնը՝ կլաստերների մեթոդով



Զգույշ	Հնարամիտ
Անխոհեմ	Բարի

Պրակտիկա անցկացնելիս տարրական դասարաններում նկատել ենք , որ դասի ընթացքում օգտագործվում են և՛ ժամանակակից և՛ ավանդական մեթոդներ: Աշակերտներին ավելի հետաքրքիր է դառնում դասը, սիրով սովորում են: Մեթոդների ճիշտ ընտրությունը նպաստում է դասի արդյունավետությանը:

2.2. ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ժամանակակից իրականությունը պարբերաբար փոփոխությունների է ենթարկվում. պարբերաբար լինում են այնպիսի իրողություններ, իրադարձություններ, որ սկզբունքային փոփոխությունների անհրաժեշտություն է զգացվում: Այսպես, օրինակ, 2020 թվականի ապրիլից ողջ կրթական համակարգը պարտադրվեց սկզբունքային փոփոխությունների . երբ ատիպված էինք ողջ աշխարհով անցնելու առցանց պարապմունքների: Այս պարագայում բավական լուրջ փոփոխություններ եղան, որոնց շրջանցում, կարծում ենք, ճիշտ չէ:

Մեր աշխատանքի այս հատվածում անդրադառնալու ենք տարրական դասարաններում պատմողական բնույթի նյութերի դասավանդման մեթոդների առանձնացմանը, վերլուծությանն ու զուգադրմանը առցանց իրականության մեջ:

Նկատենք, որ ամենաառաջին խնդիրը տարրական դասարանների երեխաների տարիքային առանձնահատկությամբ է պայմանավորված; Այսինքն՝ առցանց դասավանդման ժամանակ ուսուցչի անմիջական ներկայության բացակայությամբ պայմանավորված՝ թուլանում է վերահսկումը: Երբեմն ինչ-ինչ խնդիրներով պայմանավորված աշակերտը և ուսուցիչը նույնիսկ իրար չեն տեսնում, իրար կապող միակ միջոցը խոսքն է: Ուրեմն ինչքան նպատակային և ազդեցիկ պիտի լինի ուսուցչի խոսքը, որ առաջինից չորրորդ դասարանցի երեխայի համար տպավորիչ ու լսելի լինի, ինչ մեթոդներ պիտի կիրառի ուսուցիչը, որ հնարավորինս արդյունավետ լինի դասատվությունը:

Հանրահայտ է, որ յուրաքանչյուր մեթոդ՝ լինի ավանդական, թե ժամանակակից՝ միտված է աշակերտների զարգացմանը և մյուս կողմից դասապրոցսին դյուրին ու արդյունավետ կիրառությանը: Մեր կարծիքով, տեղին է մեջբերել Զ. Ալեքսանյանի կարծիքը. «Ամեն մի դաս, ամբողջությամբ առած, մի մեթոդով սովորաբար չի տարվում: Մանկավարժությունը մերժում է ուսումնական աշխատանքի պրոցեսում մեթոդների միօրինակությունը և պահանջում դասավանդման պրոցեսում դիմել բազմազան մեթոդների: Սակայն, հասկանալի է, որ դա միօրինակության չպետք է վերածվի: Մեթոդների ընտրությունն ու կիրառությունը քմահաճորեն չպետք է կատարվեն: Ուսուցանվող նյութի և նրան հատկացվող դասի

ամեն մի պահի առանձնահատկություններից ելնելով՝ պետք է ընտրել համապատասխան մեթոդներ: Հմուտ ուսուցիչը նյութի ուսուցման համար ոչ միայն ընտրում է համապատասխան մեթոդներ, այլև դրանք նպատակահարմար կերպով միմյանց հետ զուգակցում դասի պրոցեսում: Մեթոդների հերթագայությունը թարմացնում է աշակերտներին, տեղիք չի տալիս ձանձրույթի ու հոգնածության և ստիում է նրանց միշտ հետաքրքրությամբ հետևել դասին»[1]:

Ուսուցումը, լինելով երկկողմանի աշխատանք, կարող է ընդմիջարկվել առցանց ուսուցման պայմաններում: Անշուշ, կարծում ենք, շարունակաբար կարելի է կիրառել ժամանակի քննությունն անցած ավանդական մեթոդները՝ զրույցի, ընթերցման, երկխոսության, սակայն առցանց դասերին փոխվում է դրանց վերահսկման տարբերակը: Եթե աշակերտը դասարանում է և ուսուցիչն անմիջապես տեսնում է նրան, կարող է միանգամից հասկանալ, թե երեխան ընկալել է նյութը, թե ոչ, ապա առցանց իրականության մեջ հաճախ ուսուցիչը չի էլ տեսնում երեխայի դեմքը: Փաստորեն այս պարագայում պետք է ընտրվի զուգադրվեն այնպիսի մեթոդներ, որոնց կիրառության դեպքում վերասիկելի են հեռավար ուսուցման պարագայում: Օրինակ՝ դասանյութը պատմելիս ուսուցիչը պետք է պարբերաբար այնպիսի հանձնարարություններ տա, որոնք գրավոր բնույթ են կրում և սեղմ ժամանակներում պետք է կատարվեն: Նկատենք, որ այսօր համացանցում շրջանառվում են հեռավար դասավանդման համար նկարահանված բավական հետաքրքրական տեսադասեր, որոնք կարելի է և առկա դասերին կիրառել, եթե իհարկե, տվյալ դպրոցը տեխնիկապես դրա հնարավորությունն ունի: Բերենք դասի մեկ օրինակ՝

Դասարան ՝ 4-րդ

Ուսուցչուհի ՝ Պետրոսյան

Դասի տիպը՝ խառը

Մեթոդներ՝ << երեք բանալի և մեկ կողպեք>>, <<ԳՈՒՍ>>,

Թեման՝ <<Անահիտ>>, հեքիաթը

---

[1] Ռ.Բաղրամյան և ուրիշներ, Հայոց լեզվի դասավանդման հարցեր, Երևան, «Հայպետուսմանկհրատ», 1958թ, էջ 28:

Նպատակը՝ մշակութային ժառանգության գնահատում, մարդկային արժեքների ձևավորում

Ընթացքը ՝Կատարում են նախորդ դասի ՝ << Քաջ Նազարը>>

հեքիաթի ամփոփում : Աշակերտներից մի քանիսը բարձրաձայն կարդում են դասը՝ ամբողջությամբ, մասերով, ընտրովի, դերերով , մի քանիսը պատմում են հեքիաթը և կատարում են տնային առաջադրանքի ստուգում: Կարդում են <, երեք բանալի և մեկ կողպեք >> մեթոդով գրված առաջադրանքը, որում հստակեցվում է ընդհանուր դասի թեման:

Ուսուցչուհին առցանց գրատախտակի վրա գրում է նոր նյութի վերնագիրը՝ Ղազարոս Աղայան << Անահիտ>> հեքիաթը : Որոշակի տեղեկություններ է տալիս հեղինակի մասին այնուհետև գծում է հետևյալ աղյուսակը՝

Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորեցի

<,Գիտեմ>> բաժնում աշակերտները ասում են թե ինչ գիտեն գորգերի, տարբեր արհեստների մասին:

<<Ուզում եմ սովորել>> բաժնում գրում են թե ինչ են ուզում սովորել

<<Սովորեցի>> բաժինը թողնում են ազատ, որպեսզի լրացնեն սովորելուց հետո:

Այնուհետև ուսուցիչը կարդում է դասը: Կատարում մի շարք իմաստային, բառային աշխատանքներ այդ ընթացքում աշակերտները բառատետրում լրացումներ են կատարում:

Անդրադառնում են դասի ներքևում գտնվող առաջադրանքներին ՝ առաջադրանք 1 կատարում են բանավոր: Իսկ առաջադրանք 2 ուսուցչուհին հանձնարարում է տնային աշխատանք: Ուսուցչուհին պատասխանում է անհասկանալի հարցերին:

Եվ <<սովորեցի>> բաժինը առցանց գրատախտակի օգնությամբ լրացնում են:Ամբողջ դասը ամփոփում են <<պոպ կոռն>>մեթոդի օգնությամբ:

Նկատենք, որ լեզվի դասավանդման բոլոր մեթոդները ներկայացնում են մի ամբողջական համակարգ, որն ունի հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

1. Ուսուցանվող առարկան, տվյալ դեպքում մայրենին, պիտի ընդգրկել իր ամբողջության մեջ՝ և՛ լեզվական նյութը և պատմողական բոլոր ժանրերը, որոնք նախատեսված են տարրական դասարանների համար։ Թեկուզև ուղղագրությունը և ուղղախոսությունը սրանց զուգահեռ։
2. Բոլոր մեթոդները փոխադարձաբար կապված են իրար հետ և ծառայում են մի ընդհանուր նպատակի։
3. Դասավանդման մեթոդները բխում են ընդհանուր դիդակտիկայի սկզբունքներից։ Ունենալով իրենց մասնավոր առարկայական առանձնահատկությունները՝ դիդակտիկայի մեթոդների հետ ամբողջություն են կազմում[1]։

Սա պետք է նկատի ունենալ և հեռավար ուսուցման ժամանակ՝ անընդհատ ուշադրության կենտրոնում պահելով այն հանգամանքը, որ տվյալ պարագայում ուսուցչի անմիջական վերահսկողությունը թուլանում է։

Հեռավարի ժամանակ պետք է նկատի ունենալ և հարմարեցնել ստեղծված իրադրությանը նաև այն, որ դասավանդման մեթոդները կարող են դասակարգվել ըստ աշակերտների գիտելիքների աղբյուրի, ըստ աշխատանքի բնույթի և կատարման տեղի։ Մեթոդները կարող են տարբերվել նաև հոգեբանական հիմունքով՝ նայած թե աշակերտի ո՞ր ունակությունն է զարգացվում։ Վերջապես մեթոդները կարող են տարբերվել ըստ այն բանի, թե դատողության ի՞նչ միջոցներ են դրվում ուսուցման հիմքում՝ ինդուկցիա, թե՞ դեդուկցիա, վերլուծությո՞ւն, թե՞ համադրություն և այլն։[2] Նորագույն մեթոդական համակարգը կառուցված է այնպես, որ առանձին մեթոդներ, նախատեսված են այս կամ այն հատկության զարգացման համար։ Հայտնի է, որ աշակերտի զարգացումը անցնում է փուլերով։ Դրանք են՝ պահանջմունք, դրդապատճառ, նպատակ։ Դիդակտիկական օղակի սկզբուքի հիման վրա առաջարկվում է այնպիսի գործընթաց, որն ուղղված է միասնական նպատակին,

---

[1] << Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա>> առրկայի փաթեթ, էջ 4 ՇՊՀ, 2015թ.։

[2] Դասախոսություններ «Լեզվի մեթոդիկա» առարկայից, ՇՊՀ, Հումանիտար գիտությունների և արվեստի ամբիոն, դասախոսություն 2, էջ 4

այսինքն՝ ուսուցման ընթացքում անձի պահանջմունքների, պահանջարկի և ընդունակությունների զարգացմանը: Միասնական նպատակը ուսուցման ընթացքում անձի անձնական որակների զարգացումն է: Այսօր գոյություն ունեն տարբեր մանկավարժական համակարգեր, սակայն նրանք ընդհանրանում են նրանով, որ բոլորն էլ կարևորում են կրթության համակարգային – կառուցվածքային մոտեցումը: Բոլոր մանկավարժական համակարգերի համար սահմանված են ընդհանուր հատկանիշներ՝ ճկունություն, դինամիզմ, զանազանություն, հարմարվողականություն կանխատեսելիություն, ժառանգականություն և ամբողջականություն: Մանկավարժական մեծ համակարգերը բաղկացած են աստիճանակարգություններից, այսինքն՝ ավելի փոքր ենթակարգերից գնում են դեպի ավելի մեծերը, օրինակ՝ ուսուցման նպատակ-ներ, մեթոդներ, ձևեր, միջոցներ, ուսուցիչներ, աշակերտներ: Նորագույն մեթոդների էությունը մարդկային ռեսուրսի կառավարումն է, ի տարբերություն ավանդականի, որի հայեցակարգը մարդկային գործոնի հաշվառումն էր: Կրթության նորագույն մե-թոդների համակարգը աշակերտակենտրոն և ուսանողակենտրոն բնույթ ունի: Այն ապահովում է այնպիսի ուսուցում, որի ընթացքում նյութի բովանդակության, մշակույ-թի յուրացումը և մտավոր կարողությունների զարգացումը միասնական գործընթաց է: Զարգացնող կրթության ներկայացուցիչները «զարգացում» հասկացությանը նոր իմաստ են հաղորդում, որն առնչվում է անձի հոգեկան, անհատական առանձնահատ-կություններին՝ մտավոր կարողությունների փոփոխության հետ: Այս մեթոդները տարրական դասարանից սկսած՝ երեխաների մեջ զարգացնում են ինքնազարգացման պահանջմունք և ընդունակություններ: Այս ամենը, իհարկե, չի նշանակում, թե ավանդական մեթոդները այլևս սպառել են իրենց և դրանց զարգացնող հատկությունները այլևս չեն բավարարում ժամանակակից դպրոցի տարրական դասարաններում դասապրոցեսի իրականացման համար: Մեկ անգամ ևս նշենք, որ երեխայի զարգացման համար մեծ է ուսուցչի դերը, քանի որ բոլոր դեպքերում մեթոդի կիրառողը ուսուցիչն է լինի հեռավար, թե առկա ուսուցում: Հեռավոր ուսուցման պարագայում ևս լիովին հնարավոր է ավանդական մեթոդներով զարգացնել աշակերտի միտքն ու տրամաբանությունը, սակայն այն դեպքում ուսուցչական վերահսկողության ոչ միարժեքության դեպքում պետք է մշակվեն

մեթոդներն արդեն այդ հանգամանքը նկատի ունենալով։ Նույնը վերաբերում է և նորագույն մեթոդներ կոչվածներին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ուսումնասիրությունների արդյունքում կատարել ենք հետևյալ եզրակացությունները՝

1. Ավանդական մեթոդների կիրառումը հանդիսանում է ուսուցման հիմքը: Ուսուցման վերջնարդյունքը դառնում է առավել ամուր , և ապահովում է կրթության հետագա ճիշտ գործընթացի կազմակերպումը:
2. Տարրական դասարաններում կիրառվող ժամանակակից մեթոդների օգնությամբ ուսուցման գործընթացը դառնում է ավելի մատչելի, քանի որ դրանք ավելի շատ շեշտը դնում են ցուցադրական տեսազննական տարրերի կիրառման վրա:
3. Ե՛վ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդների հավասարաչափ հմուտ և տեղին կիրառումը նպաստում է աշակերտների և՛ տեսական կարողությունների զրգացմանը, և՛ գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորմանը:
4. Փորձել ենք առանձնացնել, վերլուծել ու զուգադրել ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառումն առցանց դասավանդման ժամանակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Գիտական տեղեկագիր» No 1-2 (34-35) Ученые записки, Խաչատուր Աբովյանի ան-վան պետական մանկավարժական համալսարան, ISSN 1829-0523, Երևան, 2018թ, 159 էջ, կայքէջը՝(http: // aspu.am/)
2. Ժամանակակից գիտական պրոբլեմների ուսումնասիրությունը բուհերում, հատոր 4, միջբուհական գիտաժողովի նյութեր, 24-25 Նոյեմբերի, 2001թ.Գյումրի, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի հրատարակչություն, տես՝ «Հեքիաթների դաստիարակչական դերը տարրական դասարաններում», Ս.Խաչատրյան, 73-76 էջեր
3. Խաչատրյան Ս., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, (օգնություն ուսուցչին), Գյումրի, 2006թ, հրատարակված է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:
4. Հայոց լեզվի դասավանդման հարցեր, ժողովածու, հեղինակներ՝ Ռ.Բաղրամյան, Զ.Ալեքսանյան, Հ.Մխիթարյան, Ա.Տեր-Գրիգորյան, Երևան, «Հայպետուսմանկհրատ», 1958թ.տես հատկապես, Զ.Ալեքսանյան, «Բարդ ստորադասական նախադասության ուսուցման մեթոդները», էջ 28 և 161-162 էջեր՝ Ա.Տեր-Գրիգորյան, «Բացատրական ընթերցանությունը նախասովետական շրջանի հայկական դպրոցներում», (1905-1920թթ.)
5. Մայրենի լեզվի դասագիրք, 3-րդ դասարան, հեղինակներ՝ Վ.Սարգսյան, Կ.Թադևոս յան, Հ.Խաչատրյան, Ե.Ջիլավյան, Երևան, «Մանմար» հրատարակչություն, 2020թ.
6. Մայրենի լեզվի դասագիրք, 2-րդ դասարան, հեղինակներ՝Վ.Ա.Սարգսյան, Կ, Թադե-վոսյան, Հ.Խաչատրյան, Ս.Գրիգորյան, Երևան, «Մանմար» հրատարակչություն, 2020թ
7. «Մանկավարժական միտք» (педагогическая мисль), Տաթև գիտակրթական համալիր, 2012, 3-4, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, լույս է տեսնում 2000թ.Նոյեմբերից, գրանցման վկայական թիվ՝ 1097, թիվ 40-41, 208 էջ, կայքէջերը՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am

8. «Մանկավարժական միտք» (педагогическая мисль), Տաթև գիտամանկավարժական համալիր, 2013, 1-2, «Զանգակ հրատարակչություն», Երևան, լույս է տեսնում 2000թ Նոյեմբերից, գրանցման վկայական թիվ 1097, թիվ 40-41, կայքէջերը՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am
9. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980թ, 285 էջ: